



Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2012 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Նախաբան

«Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության նպատակն է ՀՀ հանրային ծառայության համակարգի համալրումը որակյալ մասնագետներով, այդ համակարգում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը և վերապատրաստումը, ինչպես նաև ժամանակակից գիտատեխնիկական և դասավանդման մեթոդների կիրառմամբ կրթական ծրագրերի իրականացումը:

Ակադեմիայի գործունեության **հիմնական ուղղություններն են՝**

- ✓ մասնագետների վերապատրաստում, որակավորման բարձրացում,
- ✓ բարձրագույն մասնագիտական (մագիստրատուրա) և հետբուհական կրթական ծրագրերի իրականացում (ասպիրանտուրա, դոկտորանտուրա),
- ✓ պետական կառավարման ոլորտում գիտական հիմնարար և կիրառական հետազոտությունների, փորձագիտական արժևորումների, խորհրդարկությունների իրականացում,
- ✓ պետական կառավարման ոլորտում միջազգային գիտակրթական համագործակցություն,
- ✓ պետական կառավարման ոլորտում տեղեկատվավերլուծական նյութերի ապահովում:

2012 թվականին Ակադեմիայի աշխատանքներն ուղղված են եղել ուսումնական գործընթացի կատարելագործմանը, կրթության որակի ապահովման համակարգի ստեղծմանը, համակարգային փոփոխությունների, կրթության կազմակերպման աշխատանքների բարելավմանը, մեթոդների նորացմանը, կրթության բովանդակության հարստացմանը և որակի բարձրացմանը, միջազգային կազմակերպություններում և գործընթացներում ներգրավվածության խորացմանը, գործընկեր հաստատությունների հետ համագործակցության առավել ամրապնդմանը:

Փոխվում է հարաբերությունների որակական մակարդակն ու աշխարհագրությունը, ինչը էապես նպաստում է Ակադեմիայի հեղինակության և աշխատանքների իրականացման արդյունավետության բարձրացմանը:

Արդյունավետ գործունեություն է ծավալվել հրատարակչական ոլորտում: Տպագրվել են գրքեր, դասագրքեր, մենագրություններ և այլն: Կանոնավոր պարբերականությամբ տպագրվել են «Հանրային կառավարում» գիտական հանդեսի հերթական համարները:



Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Ակադեմիայի բոլոր գործընթացներում առանձնակի ակտիվություն են ցուցաբերել ուսանողները:

Ակադեմիայում իրականացվում են տարբեր մասնագիտություններով մագիստրոսի կրթական ծրագրեր, որոնց նպատակայնությունն ու արդյունավետությունը որևէ կերպ չի տարբերվում հանրապետության մյուս բուհերում իրականացվող ծրագրերից: Ակադեմիայում իրականացվող հետազոտությունների (մագիստրոսական, թեկնածուական, դոկտորական) թեմաները իրենց կիրառական նշանակությամբ բավական թույլ են և անհամատեղելի երկրի կառավարման համակարգում տեղի ունեցող բարեփոխումների գործընթացների հետ: Բացակայում է գիտություն-կառավարման համակարգ կապը:

Ակադեմիայի մյուս կանոնադրական կարևոր խնդիրը պետական կառավարման ոլորտի տեղեկատվական և վերլուծական ապահովումն է, ինչը ևս հեռու է բավարար կոչվելուց: Գործող գրադարանը, «Քաղաքացիական ծառայություն» շաբաթաթերթը, «Հանրային կառավարում» գիտական հանդեսն ամբողջությամբ վերաիմաստավորման և վերակազմավորման կարիք ունեն՝ ժամանակի պահանջներին ներդաշնակ գործիքներ դառնալու համար:

Բարեփոխումների գործընթացը, որն ուղղված է նշված խնդիրների լուծմանը, շարունակական բնույթ է կրում՝ տարեցտարի առաջադրելով առավել բարձր չափանիշներ:

Հաշվետվությունը ներկայացվում է ըստ գործունեության ուղղությունների ու առանձին ստորաբաժանումների:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ակադեմիայի ամբիոնները և ուսումնամեթոդական վարչությունը՝ որպես Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումներ, իրենց աշխատանքները կազմակերպել և իրականացրել են Ակադեմիայի կողմից նախապես մշակված և հաստատված ուսումնական պլանների և ուսումնական գործընթացի ժամանակացույցի համապատասխան:

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՄԲԻՈՆՆԵՐԸ

Ակադեմիայի ամբիոններն են՝

- ✓ Հանրային կառավարում և հանրային ֆինանսներ
- ✓ Իրավագիտություն
- ✓ Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն
- ✓ Կառավարման հոգեբանություն
- ✓ Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացվել են Ակադեմիայի «Իրավագիտության», «Կառավարման հոգեբանության» և



«Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության» ամբիոնների վարիչների ընտրությունները:

Ամբիոններում քննարկվել, ճշգրտվել և հաստատվել է առարկաների ցանկը՝ ըստ մասնագիտությունների: Վերանայվել են առարկայական ծրագրերը, հարցաշարերը, մասնագիտական գրականությունը:

Ամբիոնների նիստերում քննարկվել են՝

- թեկնածուական ատենախոսությունների թեմաների և դրանց գիտական ղեկավարների առաջադրման կամ դրանց փոփոխման հետ կապված հարցեր,
- թեկնածուական ատենախոսությունների, դասավանդող դասախոսների ծանրաբեռնվածությունների, հարցաշարերի և առարկայական ծրագրերի հարցեր,
- մագիստրոսական թեզերի թեմաների և դրանց գիտական ղեկավարների ընտրության հարցերը, քննական և ստուգարքային հարցաշարերը, պետական քննության հարցաշարերը և այլն:

Ակադեմիան՝ որպես առաջատար կազմակերպություն, ամբիոնների միջոցով կարծիք է ներկայացրել դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների վերաբերյալ:

Ակադեմիայի ամբիոններում քննարկվել են «Հանրային կառավարում» գիտական հանդեսում տպագրման ենթակա հոդվածները:

Ակադեմիայի **ուսումնական գործընթացի** կազմակերպման և անցկացման աշխատանքներում կատարվել են զգալի փոփոխություններ:

Ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների հատկացման և պետական կրթաթոշակների տրամադրում

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում ուսումնական տարվա առաջադիմության արդյունքներով ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների տրամադրման» կարգի դրույթներով, 2011-2012 ուսումնական տարվա արդյունքներով, մրցութային կարգով՝ առավել բարձր առաջադիմություն ունեցող 2-րդ կուրսի մագիստրանտները ՀՀ կառավարության կողմից հատկացված տեղերի քանակով ստացել են ուսման վարձի լրիվ փոխհատուցում:

Փոխատեղման (ռոտացիա) արդյունքում **14** մագիստրանտ իրենց անվճար հիմունքներով սովորելու իրավունքը զիջել են առավել բարձր առաջադիմություն և ՄՈԳ (միջին որակավորման գնահատական) ունեցող մագիստրանտներին:



Ակադեմիայում փոխատեղման (ռոտացիոն) համակարգի ներդրումից և կիրառումից հետո նկատվում է մագիստրանտների առավել բարձր առաջադիմություն ցուցաբերելու ձգտում, ինչն ապահովում է միայն առողջ մրցակցություն և անաչառություն:

Նշված կարգի համաձայն՝ 2012-2013 ուսումնական տարում Ակադեմիան վճարովի համակարգում սովորող ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառման և համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում իր միջոցների հաշվին ուսման վարձավճարն ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցում է կիրառել առկա ուսուցման **14** և հեռակա ուսուցման **21** մագիստրանտների նկատմամբ:

Ձեռչերի կիրառման և նպաստների հատկացման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով ուսումնամեթոդական վարչությունն իրականացրել է առաջադիմության վերահսկման աշխատանքներ:

«Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի մագիստրանտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգի համաձայն՝ նախորդ ուսումնական տարվա մագիստրանտների մագիստրոսական թեզերի պաշտպանությունը և ամփոփիչ քննությունը կազմակերպելու նպատակով՝ **ապահովվել են քննությունների տեսագրությունները, փոփոխության են ենթարկվել ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման պայմանները, գրանցման մատյանները և արձանագրության ձևերը:**

Ամփոփվել և ՀՀ կրթության և գիտության նախարարություն են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:

Ընթացքի մեջ է բարձրագույն կրթական ծրագրերով Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիային տրված լիցենզիան մագիստրոսի կրթական ծրագրով լիցենզիայի վերաձևակերպելու գործընթացը:

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի ու 28-րդ հոդվածի և «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ պատրաստվել և ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Համապատասխան աշխատանքներ են իրականացվում **կրթական գործընթացի որակի բարելավման ուղղությամբ:**

Հատկապես Բոլոնյան գործընթացին անդամագրվելուց հետո մեր երկրի զարգացման գործում գնալով ավելի ու ավելի է կարևորվում որակյալ կրթության դերը: Մեր օրերում մասնագիտական կրթության համակարգը պարտավոր է պատրաստել հարուստ գիտելիքներով, հմտություններով և կարողություններով օժտված



մասնագետներ, ովքեր ի վիճակի կլինեն գործունեություն ծավալել հարավփոփոխ միջավայրում:

Բոլոնյան գործընթացի կարևորագույն խնդիրներից է որակի ապահովումը:

Աստիճանաբար փոխվում է կրթության նկատմամբ մոտեցումը: Ուսանողների մոտ ձևավորվում են գիտելիք ձեռք բերելու հմտություններ, ինչն էլ առաջիկայում կօգնի նրանց՝ սովորելու ամբողջ կյանքի ընթացքում: Այսօրինակ մոտեցման պարագայում փոխվում է նաև դասախոսի դերակատարությունը. նրա գլխավոր նպատակը կդառնա ուսանողների կրթական գործողություններն ուղղորդելու, գիտելիքի յուրացման և կարողությունների ձեռքբերման գործընթացը կառավարելու գործառույթի իրականացումը:

Կիրառվում են ուսումնառության և դասավանդման արդյունավետ մեթոդներ՝ համադրելով դասավանդման դասական եղանակները (դասախոսություններ, գործնական պարապմունքներ և այլն) ժամանակակից ինտերակտիվ մեթոդների հետ:

Պատրաստվել են հարցաշարեր, և անցկացվել է հարցում ուսանողների շրջանում՝ պարզելու, թե ուսանողության կարծիքով այժմ ինչպիսի խնդիրներ կան Ակադեմիայում և լուծման ինչ եղանակներ են առաջարկում:

Առաջնորդվելով Բոլոնյան հռչակագրի պահանջներով՝ 2012-2013 ուսումնական տարվանից Ակադեմիայում **ներդրվել և կիրառվել է ընտրովի դասընթացների**, ինչպես նաև **դասախոսների ընտրության** համակարգը:

Մագիստրանտին հնարավորություն է ընձեռվել ընտրելու որոշակի խմբաքանակի առարկաներից իր նախընտրած առարկաները:

Առաջիկայում Ակադեմիայում պլանավորվում է ընդլայնել ընտրովի առարկաների և դասախոսների ընտրության փորձը:

Ուսումնական գործընթացն առավել արդյունավետ և մատչելի կազմակերպելու, սովորողների անհատական տվյալները, ընթացիկ առաջադիմության արդյունքները գրանցելու, արխիվացնելու, ուսումնամեթոդական վարչության աշխատանքները ավտոմատացնելու նպատակով մշակվել է համապատասխան **համակարգչային ծրագիր: Տվյալների բազան** նախագծվել է Microsoft SQL Server 2012 համակարգով:

Առավելություններն են՝

- ✓ պաշտպանված համակարգ,
- ✓ շատ մեծ քանակի գրանցումներ:

Համակարգչային ծրագիրը հաջողությամբ կիրառվում է ուսումնամեթոդական վարչության կողմից:

Ընդունելություն

Իրականացվել է 2012-2013 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի կրթական ծրագրով **ընդունելություն**:


2012-2013 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցման բոլոր դիմորդները փաստաթղթերի հանձնման փուլում անցել են **հոգեբանական թեստավորում**:

Ստացված տվյալները ենթարկվել են համապատասխան վիճակագրական և մասնագիտական վերլուծության, **կազմվել է յուրաքանչյուր դիմորդի հոգեբանական դիմանկարը**: Նախատեսվում է այդ աշխատանքները շարունակել ավարտական կուրսում և ավարտական փաստաթղթերի հետ միասին ներկայացնել հոգեբանական դիմանկար, որտեղ տրվում են հոգեկան հատկությունների և առանձնահատկությունների հիման վրա գործունեության այն ուղղություններն ու ոլորտները և պաշտոնները, որտեղ այդ անձը կարող է արդյունավետ դրսևորել իրեն:

Աղյուսակ 1

2009-2013 թթ. ընդունելության ցուցանիշները

Ուսուցման ձևը	2009-2010 ուսումնական տարի	2010-2011 ուսումնական տարի	2011-2012 ուսումնական տարի	2012-2013 ուսումնական տարի
Առկա	101	78	105	128
Հեռակա	101	106	108	117
Ընդհանուր	202	184	213	245



Նկար 1. 2009-2013 թթ. ընդունելության ցուցանիշները

Հոգեբանական թեստերի փաթեթը մշակվել, ստեղծվել և վերլուծվել է **Կառավարման հոգեբանության ամբիոնի** կողմից: 2012 թվականին, ըստ ցանկության, թեստավորվել են Ակադեմիայի առաջին կուրսի մագիստրանտները:


Իրականացվել է մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողների և Ակադեմիայի միջև ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ պայմանագրերի կնքման գործընթացը:

ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

Աղյուսակ 2

Ակադեմիայի մագիստրանտների թվաքանակը՝ ըստ ուսուցման համակարգերի (2009-2013 թթ.)

Ուսուցման ձևը	2009-2010 ուսումնական տարի	2010-2011 ուսումնական տարի	2011-2012 ուսումնական տարի	2012-2013 ուսումնական տարի
Առկա	189	165	178	208
Հեռակա	271	283	284	313
Ընդհանուր	460	448	462	521




Նկար 2. Ակադեմիայի մագիստրանտների թվաքանակը՝ ըստ ուսուցման համակարգերի (2009-2013թթ.)

Ըստ մասնագիտությունների՝ ուսանողների թվի բաշխվածությունը ներկայացված է 3-րդ աղյուսակում և 3-րդ, 4-րդ, 5-րդ նկարներում:


Աղյուսակ 3

Ակադեմիայի ուսանողների թվաքանակը՝ ըստ մասնագիտությունների


Մասնագիտություն	Ուսուցման ձևը		Ընդհանուր
	Առկա	Հեռակա	
Հանրային կառավարում	93	127	220
Կառավարում (Հանրային ֆինանսների կառավարում)	42	47	89
Իրավագիտություն	37	85	122
Քաղաքագիտություն (Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն)	19	26	45
Հոգեբանություն (Կառավարման հոգեբանություն)	17	28	45
ԸՆԴՀԱՆՈՒՐ	208	313	521



Նկար 3. Ակադեմիայի մագիստրանտների թվաքանակը՝ ըստ մասնագիտությունների (առկա համակարգում)



Նկար 4. Ակադեմիայի մագիստրանտների թվաքանակը՝ ըստ մասնագիտությունների (հեռակա համակարգում)



Նկար 5. Ակադեմիայի մագիստրանտների թվաքանակը՝ ըստ մասնագիտությունների (առկա և հեռակա համակարգերում)

Կառավարչական և գիտահետազոտական պրակտիկաներ

Էական փոփոխություններ են գրանցվել **կառավարչական և գիտահետազոտական պրակտիկաների** կազմակերպման և անցկացման ընթացքում մագիստրանտների հետ տարվող աշխատանքներում, ինչի արդյունքում բարձրացել է պրակտիկայի հաշվետվությունների և պաշտպանության արդյունքների որակը:

Կառավարչական և գիտահետազոտական պրակտիկաները կազմակերպվում են ՀՀ Նախագահի աշխատակազմում, ՀՀ Ազգային ժողովում, ՀՀ Սահմանադրական դատարանում, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում, ՀՀ նախարարություններում, այլ գերատեսչություններում, ինչպես նաև արտերկրում՝

- Լեհաստանի պետական կառավարման ազգային դպրոց,
- Ֆրանս- հայկական առևտրաարդյունաբերական պալատ,



➤ **Լիբանանի Հայկազյան համալսարան և այլն:**

Նման կառույցներում անցկացրած պրակտիկան օգնում է մագիստրանտներին ձեռք բերել լիարժեք գիտելիքներ պետական կառավարման համակարգի գործունեության մասին և ըմբռնել վերջինիս էությունը, տիրապետել տվյալ ոլորտի կարգավորման առանձնահատկություններին, ինչպես նաև ձեռք բերել անհրաժեշտ մասնագիտական փորձ հետագայում պետական կառավարման համակարգում աշխատելու համար:

Առաջին անգամ 2012 թվականի հունիսի 28-ից հուլիսի 28-ն ընկած ժամանակահատվածում Ակադեմիայի **երեք լավագույն ուսանողներն** իրենց կառավարչական պրակտիկան անցկացրին արտերկրում՝ **Լիբանանի Հայկազյան համալսարանում**, որը Սփյուռքում միակ հայկական համալսարանն է: Ուսանողները մասնակցել են ամառային դասընթացի, գործնական աշխատանքների և այդ ընթացքում համալսարանում կազմակերպված մի քանի միջոցառման:

Ուսանողները պրակտիկա են անցել Լիբանանի Կենտրոնական բանկում, Բուրջ Համուդի քաղաքապետարանում, Լիբանանի ֆինանսների ինստիտուտում:

Աշխատանքներ են տարվում նաև ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսանողների ձմեռային պրակտիկան Ֆրանսիայի Հանրապետությունում կազմակերպելու ուղղությամբ:

Ակադեմիան մեծ նշանակություն է տալիս մագիստրանտների պրակտիկաների կազմակերպմանը և դրանք պատշաճ մակարդակով անցկացնելու աշխատանքներին: Այդ իսկ պատճառով պրակտիկաների կազմակերպման փուլում իր անմիջական մասնակցությունն ունի Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը: Նրա գրավոր միջնորդությամբ են ուղարկվում մագիստրանտների փաստաթղթերը համապատասխան պրակտիկայի վայրեր:

Կառավարչական պրակտիկան հնարավորություն է ընձեռում մագիստրանտներին ոչ միայն ծանոթանալ պետական կառավարման համակարգին, այլև ձեռք բերել որոշակի կառավարչական հմտություններ:

Գիտահետազոտական պրակտիկայի նպատակն է օգնել մագիստրանտին պրակտիկայի անցկացման վայրում ձեռք բերել համապատասխան նյութեր՝ մագիստրոսական թեզի պաշտպանության համար:

Կառավարչական և գիտահետազոտական պրակտիկաների ժամանակացույց

16.01.2012թ-10.02.2012թ. ժամանակահատվածում **հեռակա** ուսուցման երկրորդ կուրսի 1014 թողարկման **կառավարչական** պրակտիկա (հաշվետվությունների պաշտպանություն և արդյունքների ամփոփում՝ **20.02.2012թ. - 24.02.2012թ.**)



13.02.2012թ-13.03.2012թ. ժամանակահատվածում **առկա** ուսուցման երկրորդ կուրսի 1016 թողարկման **գիտահետազոտական** պրակտիկա (հաշվետվությունների պաշտպանություն և արդյունքների ամփոփում՝ **26.03.2012թ. - 30.03.2012թ.**)

02.07.2012թ-27.07.2012թ. ժամանակահատվածում **առկա** ուսուցման առաջին կուրսի 1117 թողարկման **կառավարչական** պրակտիկա (հաշվետվությունների պաշտպանություն և արդյունքների ամփոփում՝ **06.09.2012թ. - 09.09.2012թ.**)

12.11.2012թ-07.12.2012թ. ժամանակահատվածում **հեռակա** ուսուցման երկրորդ կուրսի 1014 թողարկման **գիտահետազոտական** պրակտիկա (հաշվետվությունների պաշտպանություն և արդյունքների ամփոփում՝ **20.12.2012թ. - 26.12.2012թ.**)

Համապատասխան աշխատանքներ են իրականացվել **կադրերի ռեզերվի ձևավորման և ռեզերվում Ակադեմիայի շրջանավարտների** ընդգրկման ուղղությամբ:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայում 2012 թվականի հուլիսի 2-ից հոկտեմբերի 27-ը կազմակերպվել է **հոգեբանական թրեյնինգային ծրագիր՝ «Հոգեբանական խորհրդատվություն (գործնական աշխատանքի տեխնիկաներ և հմտություններ) թեմայով**, 75 ժամ ընդհանուր տևողությամբ:

Դասընթացը (հոգեբանական թրեյնինգային ծրագիր) նախատեսված էր գործնական հոգեբանների, հոգեբան խորհրդատուների, հոգեբանական օգնության կենտրոնների մասնագետների, ուսումնական հաստատությունների «Հոգեբանություն» մասնագիտությամբ ուսանողների համար:

Դասընթացի 12 մասնակիցներին շնորհվել են հավաստագրեր:

2012 թվականի դեկտեմբերի 5-ից իրականացվում է «Հոգեբանական խորհրդատվություն (գործնական աշխատանքի տեխնիկաներ և հմտություններ) թեմայով 2-րդ դասընթացը:

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի 2012 թվականի նոյեմբերի 28-ի նիստի (արձանագրություն N° 98) որոշմամբ հաստատվեց ևս 2 ծրագիր՝

**1.«Ղեկավարման հոգեբանական հմտությունների զարգացման թրեյնինգ»
Ղեկավարման հոգեբանական հմտությունների զարգացման թրեյնինգ**

Ծրագիրը նախատեսված է հոգեբանների, կառավարիչների և բոլոր նրանց համար, ում անհրաժեշտ է կազմակերպել թիմային աշխատանքներ, ղեկավարել և համագործակցել տարբեր մարդկանց և խմբերի հետ: Ծրագրում նախատեսված է մարզել ներազդման հմտություններ, ձևավորել ներազդմանը դիմակայելու հմտություններ, ուսուցանել խմբային աշխատանքի հիմնական կանոններն ու սկզբունքները: Ընդհանուր տևողությունը՝ 75 ժամ (3 ամիս):



2. «Քաղաքական լիդերություն» թեմայով դասընթաց

Քաղաքական գիտության կառուցվածքում «Քաղաքական լիդերություն» թեմայի ուսումնասիրումը գերակա նշանակություն ունի ժողովրդավարական կերպափոխման գործընթացում գտնվող երկրների քաղաքական զարգացման առանձնահատկությունների և ինստիտուցիոնալ կարգի ուսումնասիրման համար: Այս թեմայի դասավանդումը հնարավորություն կտա զարգացնել ունկնդիրների կիրառական գիտելիքները և համակարգային քաղաքական վերլուծություններ կատարելու: Մինևույն ժամանակ «Քաղաքական լիդերություն» թեմայի դասավանդումը հետամուտ է բացահայտելու ունկնդիրների ունակությունները ինքնաճանաչողության և ինքնակառավարման ենթատեքստում: Ընդհանուր տևողությունը՝ 32 ժամ (1 ամիս):

Ակադեմիայի ամբիոնների անմիջական ղեկավարությամբ ապահովվել է **մագիստրանտների մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովներում:**

Ակադեմիայի մագիստրանտներն արժանացել են պատվոգրերի՝

- ✓ քաղաքագիտության երկրորդ կուրսի մագիստրանտ Աննա Կարապետյանը ստացել է մասնակցության հավաստագիր,
- ✓ քաղաքագիտության առաջին կուրսի մագիստրանտ Դիանա Բաղդասարյանն արժանացել է երկրորդ կարգի մրցանակի:
- ✓ ԵՊՀ-ի Ուսանողական գիտական ընկերության հիմնադրման 65-ամյակին և հայ գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում հանրային կառավարում մասնագիտության երկրորդ կուրսի մագիստրանտ Լիանա Խաչատրյանի ներկայացրած «Հայկական աշխարհը՝ որպես գլոբալ քաղաքացիական հասարակության բաղադրիչ» վերտառությամբ աշխատանքն արժանանացել է բարձր գնահատականի և խրախուսանքի (գիտական ղեկավար՝ քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Մարիամ Մարգարյան) և այլն:

ԱՌԱՋԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Ակադեմիայում 2012 թվականի դեկտեմբերի 13-ին և 14-ին տեղի ունեցավ ուսանողական գիտաժողով, որին մասնակցության հայտ էին ներկայացրել Ակադեմիայի վեց տասնյակից ավելի ուսանողներ: Նման գիտաժողով Ակադեմիայում առաջին անգամ էր կազմակերպվում:

«Տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Քաղաքական զարգացման և արդիականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Արդի կառավարման և միջանձնային հարաբերությունների հոգեբանական հիմնախնդիրները», «Պետություն, իրավունք, հասարակություն», «Տեղեկատվական անվտանգությունը Հայաստանի Հանրապետությունում». այս թեմաների շուրջ իրենց



Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

գիտական եզրահանգումները Ակադեմիայի մագիստրանտները ներկայացրեցին հանձնաժողովին:

Ակադեմիայի ռեկտորատը մրցանակային տեղեր էր սահմանել գիտաժողովում առավել աչքի ընկած աշխատանքների հեղինակների համար: Դրանցից հինգը՝ Լաուրա Սարգսյանը («Կառավարման հոգեբանություն» մասնագիտության 2-րդ կուրս), Էդուարդ Մինասյանն ու Գևորգ Օհանյանը («Քաղաքագիտություն» ՔԿ և ՔՎ մասնագիտության 2-րդ կուրս), Մերի Կատվայանը («Հանրային կառավարում» մասնագիտության 2-րդ կուրս), Շուշանա Զոհրաբյանը («Իրավագիտություն» մասնագիտության 2-րդ կուրս), արժանացան դրամական պարգևների: Երեք տասնյակ մասնակիցներ արժանացան նվերների: Գիտաժողովի բոլոր մասնակիցները ստացան վկայականներ: Լավագույն հոդվածները կտպագրվեն:

Ակադեմիայի առաջին կուրսի ուսանողները կազմակերպել են **դաս-միջոցառում՝ նվիրված քաղաքացիական ծառայության համակարգի ստեղծմանն ու կայացմանը:** Կազմավորվել էր «կառավարություն» («նախարարություններ»՝ իրենց գերատեսչություններով), որի շրջանակում քննարկումներ էին ծավալվել քաղաքացիական ծառայության օրենսդրության վերաբերյալ: Քաղաքացիական ծառայության համակարգը ներկայացվեց մի շարք պետությունների օրինակով և կարևորվեց քաղաքացիական ծառայության ինստիտուտի միջոցով պետականության ամրապնդման հարցը: Այնուհետև ներկայացվեցին վերապատրաստման և ատեստավորման գործընթացներին նվիրված հետազոտության արդյունքները:

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիայի մագիստրանտները (20 հոգանի) Արցախի պետական համալսարանում հանդես են եկել զեկույցներով:

Ակադեմիայում կազմակերպվում է **հոգեբանական ծառայություն** առկա և հեռակա ուսուցման մագիստրանտների համար:

Մասնագիտական կողմնորոշման և մասնագիտության ընտրության հարցում Ակադեմիայի սովորողներին տրամադրվել է **խորհրդատվություն՝ պրոֆեսիոգրամաների և պսիխոգրամաների օգնությամբ:**

Կառավարման հոգեբանության ամբիոնի կողմից, գիտահետազոտական աշխատանքներ կատարելու նպատակով, մշակվել և առաջարկվել են ծրագրեր՝ տարբեր գերատեսչությունների աշխատակիցների համար:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայում ստեղծվել է **հոգեբանական բանավիճային ակումբ**, որտեղ քննարկվում են ուսանողների համար հետաքրքրություն ներկայացնող ամենատարբեր և բազմաբնույթ թեմաներ, որոնք կնպաստեն մագիստրանտների մոտ ձևավորելու բանավեճ վարելու մշակույթ, լսելու և սեփական կարծիքը հիմնավորելու ունակություններ:



2012թ. մայիսի 11-ին ՀՀ պետական կառավարման ակադեմիայում կառավարման հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ կայացել է **Մ**-էքսպո միջոցառումը:

Այն կրել է «**ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**» խորագիրը: Էքսպոյի նպատակն էր իրագրել հասարակությանը և տարբեր ոլորտներում գործող կազմակերպություններին կիրառական հոգեբանության, հանրային և ֆինանսների կառավարման, իրավաբանական և քաղաքական գիտությունների փոխկապակցվածության մասին: Միջոցառմանը մասնակցել են հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ, հոգեբանական ծառայություններ մատուցող կենտրոններ, կազմակերպություններ: Միջոցառման շրջանակներում իրականացվել է նաև ցուցահանդես-վաճառք:

Պարբերաբար հրավիրվել են համապատասխան մասնագետներ, գիտնականներ, պետական կառավարման համակարգի ներկայացուցիչներ, ինչպես նաև արտերկրի տարբեր գիտական հաստատություններում դասավանդող դասախոսներ:

Մագիստրանտները հնարավորություն են ունենում մասնակցելու վերը նշված միջոցառումներին որպես ունկնդիր և որպես զեկուցող կամ քննարկումների մասնակից: Նման հանդիպումները հնարավորություն են տալիս ձեռք բերելու համապատասխան կարողություններ և հմտություններ կառավարման համակարգում, ինչպես նաև բացահայտում են մրցունակ, ինովացիոն մտածողություն ունեցող մագիստրանտներին:

Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնում պարբերաբար կազմակերպվում են խորհրդատվություններ Հայաստանի Հանրապետության քաղաքական գործիչների համար:

ԱՐՏԱԼՍԱՐԱՆԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Բացի վերոնշյալ ուսումնական և գիտական աշխատանքներից Ակադեմիան առանձնակի տեղ է հատկացնում մագիստրանտների արտալսարանային միջոցառումների կազմակերպմանն ու անցկացմանը:

Կազմակերպվել են արտալսարանային կլոր սեղաններ հետևյալ թեմաներով՝

- ✓ «Լիդերի ինստիտուտի կայացումը ՀՀ-ում»,
- ✓ «Լավ կառավարում» և ՀՀ մարտահրավերները» և այլն:

Ծրագրավորվում է անցկացնել «GR տեխնոլոգիաների զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով կլոր սեղան. իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ¹:

¹ Նախաձեռնել է Ակադեմիայի քաղաքագիտության կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնը:



Կազմակերպվել են նաև **ուսանողների գեղագիտական և հոգևոր դաստիարակությանն** ուղղված բազմաբնույթ միջոցառումներ:

Պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ նշանավոր քաղաքական գործիչների, արվեստի ներկայացուցիչների հետ:

Կազմակերպվում են շրջայցեր Հայաստանի տեսարժան վայրեր, ծանոթանում են ՀՀ պատմամշակութային հուշարձաններին, անցկացվում են ֆիլմերի դիտումներ, կլոր սեղաններ, քննարկումներ և այլ միջոցառումներ:

Այդ թվում՝

✓ «Տիեզերքի առավուտը» բանաստեղծությունների ժողովածուի (հեղինակ՝ հանրային կառավարում և հանրային ֆինանսներ ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ Գրիշա Գսպոյան) շնորհանդես, (վավերագրական ֆիլմ հեղինակի մասին, քննարկումներ):

✓ Հանդիպում Փարաջանովի անվան տուն-թանգարանի տնօրեն Զավեն Սարգսյանի հետ: Ներկայացվել է Սերգեյ Փարաջանովի կենսագրությունը, հետաքրքրական տեղեկատվություն տուն-թանգարանի վերաբերյալ:

✓ «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղի անցկացում և այլն:

Առանձնակի կարևորվել է ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի հիմքերի ստեղծումը Ակադեմիայում (կազմավորվել են համապատասխան մարզաձևերի խմբակներ):

Անցյալ ուսումնական տարում Ակադեմիայի ղեկավարության աջակցությամբ ձևավորվեց Ակադեմիայի առաջին **ուսանողական ինքնակառավարման կառույցը՝ ուսանողական խորհուրդը**. այն դեռ լիովին կայացած չէ, սակայն փորձում է անել իր առաջին քայլերը:

Հետևողական աշխատանքներ են կատարվել **Ակադեմիայի խորհրդանշանների** (խորհրդանիշ (լոգո), դրոշ, մեդալ) մշակման ուղղությամբ:

խորհրդանշանի հայեցակարգի հիմքում այն գաղափարն է, որ կառավարման համակարգն աստիճանական անցում է ներքևից վերև՝ տեղական ինքնակառավարումից դեպի պետական կառավարում:

խորհրդանշանը լուծված է գրքի տեսքով, որը խորհրդանշում է հայ ավանդական ձեռագիր մատյանը՝ իր հոգևոր-մշակութային բացառիկ արժեքով:

խորհրդանշանի ներսում «Հայաստանի Հանրապետություն» բառակապակցության սկզբնատառերն են՝ լուծված գլխատառերով, որոնք զուգահեռվում են հայկական լեռների գծապատկերին:

խորհրդանշանի վրա երևում է հայ ճարտարապետության հելլենիստական ավանդույթում առկա հոնիական սյունը, որը խորհրդանշում է պետականության գերակայությունը:



Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Խորհրդանշանի ներքևի ծախս անկյունում Հին Հայաստանի տիգրանյան շրջանին բնորոշ ութաթև աստղն է, որը խորհրդանշում է կրթության լույսը՝ լուծված դարբնոցի քուրայի խորհրդապատկերով:

Խորհրդանշանի ներքևի մասում հորիզոնական դիրքով գրված է «ՊԵՏԱԿԱՆ» բառը, իսկ հոնիական սյունի ծախս կողմում ուղղահայաց գրված է «ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»:

Խորհրդանշանի գերիշխող գույնը հայկական ձեռագրային մշակույթում լայնորեն տարածված լաջվարդն է, որը խորհրդանշում է հայ ժողովրդի ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առևտրային նշանի նախագծի հեղինակն է ճարտարապետ Միքայել Միսակյանը:

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ, ԴՈԿՏՐԱՆՏՈՒՐԱ, ՀԱՅՅՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիան ունի ասպիրանտուրա իրականացնելու իրավունք հետևյալ մասնագիտությունների գծով՝

- ԺԲ.00.02- Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում,
- ԺԲ.00.01- Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, իրավական ուսմունքների պատմություն,
- Ը.00.02- Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում,
- ԻԳ.00.02- Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ,
- ԺԹ.00.01- Հոգեբանության տեսություն և պատմություն,
- ԺԹ.00.02- Աշխատանքի հոգեբանություն, ինժեներական հոգեբանություն:

Վերջին տարիներին ակադեմիայում իրականացվում է ասպիրանտուրա հետևյալ մասնագիտությունների գծով՝

- ԺԲ.00.02- Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում,
- Ը.00.02- Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում,
- ԻԳ.00.02- Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ,
- ԻԳ.00.03- Հանրային կառավարում,
- ԺԹ.00.01- Հոգեբանության տեսություն և պատմություն:

Ակադեմիայում գործում են ստուգարքների և քննությունների հետևյալ որակավորման հանձնաժողովները՝

- Ինֆորմատիկա,
- Փիլիսոփայություն,
- Օտար լեզու՝ անգլերեն,



Հայաստանի Հանրապետության պետական կառավարման սկադեմիա

- ԺԲ.00.02- Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում,
- ԺԲ.00.01-Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, իրավական ուսմունքների պատմություն,
- Ը.00.02- Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում,
- ԻԳ .00.02- Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ,
- ԻԳ.00.03-Հանրային կառավարում:

2012 թվականի հունվար-մարտ ամիսներին շարունակվել են առաջին և երկրորդ տարվա առկա և հեռակա ուսուցման ասպիրանտուրայի 1001 և 1102 թողարկումների առաջին կիսամյակի լսարանային պարապմունքները: Մարտին կազմակերպվել և անցկացվել է 1001 և 1102 թողարկումների ասպիրանտուրայի առաջին կիսամյակի քննաշրջանը:

Մարտ- մայիս ամիսներին կազմակերպվել են Ակադեմիայի ասպիրանտուրայի 15 հավանական դիմորդների նախապատրաստական դասընթացներն ու քննությունները «Օտար լեզու» (անգլերեն և ֆրանսերեն) և «Համակարգչից օգտվելու հմտություններ» առարկաներից Հայաստանի ամերիկյան համալսարանում, Ալյանս Ֆրանսեզ կազմակերպությունում և Երևանի պետական համալսարանի հաշվիչ կենտրոնում:

Համաձայն ՀՀ ԲՈՀ-ի «Որակավորման քննությունների կարգի»՝ մայիս-հունիս ժամանակահատվածում անցկացվել է ասպիրանտների և հայցորդների որակավորման գարնանային քննաշրջանը:

Հունիսին լրացել է առկա ուսուցման 7 ասպիրանտների ուսուցման ժամկետը, ովքեր ազատվել են ասպիրանտուրայից:

Մայիս-հունիս ամիսներին կազմակերպվել և անցկացվել են 1001 և 1102 թողարկումների ասպիրանտուրայի երկրորդ կիսամյակի լսարանային պարապմունքները: Հուլիսին անցկացվել է 1001 և 1102 թողարկումների ասպիրանտուրայի երկրորդ կիսամյակի քննաշրջանը:

Նոյեմբերին տեղի է ունեցել հեռակա ուսուցման ասպիրանտուրայի ընդունելություն, որի արդյունքում ընդունվել է 3 դիմորդ:

Համաձայն ՀՀ ԲՈՀ-ի «Որակավորման քննությունների կարգի»՝ նոյեմբերին անցկացվել է ասպիրանտների և հայցորդների որակավորման աշնանային քննաշրջանը:

Նոյեմբերին լրացել է հեռակա ուսուցմամբ 2 ասպիրանտի ուսումնառության ժամկետը, ովքեր ազատվել են ասպիրանտուրայից:

2012 թվականին որպես հայցորդ ձևակերպվել է 10 անձ:

Ներկայումս Ակադեմիան ունի առկա ուսուցմամբ 7, հեռակա ուսուցմամբ 9 ասպիրանտ, 1 դոկտորանտ և 45 հայցորդ:



Աղյուսակ 4

ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ, ՀԱՅՅՈՐԴՆԵՐԻ ԵՎ ԴՈԿՏՈՐԱՆՏՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ (2010-2012թթ.)

Տարեթիվ	առկա	հեռակա	հայցորդ	դոկտորանտ
2010	25	8	6	1
2011	15	8	39	1
2012	7	9	45	1

«Հ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի N 934 Ա/Ք հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ՝ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության ոլորտի երրորդ աստիճանում կրթական խնդիրների արդյունավետ իրականացման, ինչպես նաև բարելավման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման նպատակով: Ակադեմիայի ասպիրանտուրայի բաժնի պետը նշված աշխատանքային խմբի անդամ է:

Կրթության որակի բարելավման նպատակով հետևողական աշխատանքները շարունակվեցին **պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման, նրանց աշխատավարձերի օպտիմալացման, ինչպես նաև լսարանային ժամերի արդյունավետ օգտագործման և դասերի անխափան իրականացման ուղղությամբ:**

Վերոհիշյալ աշխատանքները պահանջում են անընդհատ հետևողականություն՝ լսարանային ֆոնդի օգտագործման, դասատախտակների ստուգման, հիմնական և համատեղող պրոֆեսորադասախոսական կազմի փաստաթղթերի ձևակերպման, կատարողականների վերահսկման, ուսումնական գործընթացի հսկման, ուսանողների և դասախոսների բացակայությունների գրանցման և ամփոփման առումով:


Աղյուսակ 5

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՎԱՐՉԱԿԱՆ, ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ, ՌԻՍՈՒՄՆԱԾԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Աշխատողներ	2010	2011	2012		
Ընդհանուր աշխատողների թիվը	60	68	73		
Հիմնական	34	51	55		
Համատեղությամբ	16	17	18		

				Գիտությունների թեկնածու	գիտությունների դոկտոր/պրոֆեսոր
Դասախոսների ընդհանուր թիվը	27	29	33	19	8
Հիմնական	12	12	17		
Համատեղությամբ	15	17	16		
Հրավիրված դասախոսներ	68	77	108	40	16

Ակադեմիայի աշխատողների ընդհանուր թիվը կազմում է 73, որից՝ վարչական անձնակազմ՝ 10, պրոֆեսորադասախոսական կազմ՝ 33, ուսումնասովորական անձնակազմ՝ 21 և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ՝ 9:



Նկար 6. Ակադեմիայի աշխատողների թվաքանակը

Ժամավճարային հիմունքներով Ակադեմիայում դասավանդում է **108** դասախոս, իսկ համատեղությամբ՝ **18**:

Դասախոսական կազմը համալրված է բարձր որակավորում ունեցող դասախոսներով: Դասախոսություններով հանդես են գալիս բարձրաստիճան պաշտոնատար անձինք, գիտությունների դոկտորներ, թեկնածուներ, այլ բուհերի ամբիոնների վարիչներ, կրթության ոլորտի առաջատար մասնագետներ:

Գիտությունների դոկտորներ և (կամ) պրոֆեսորներ՝ **24**, որից 8-ը հիմնական դասախոսներ, 16-ը՝ ժամավճարային հիմունքներով, գիտությունների թեկնածուներ և (կամ) դոցենտներ՝ **59**, որից 19-ը հիմնական դասախոսներ, **40-ը**՝ ժամավճարային հիմունքներով:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կադրային քաղաքականության ռազմավարական ուղղություններից մեկը հանրային ծառայության համար կադրերի վերապատրաստումը և որակավորման բարձրացումն է:

Ակադեմիան էական ավանդ և ներդրում ունի ՀՀ պետական կառավարման համակարգում հանրային ծառայողների վերապատրաստման և որակավորման բարձրացման գործում:

Վերապատրաստման ծրագրերն իրականացվում են դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: ՀՀ պետական կառավարման ակադեմիայում վերապատրաստումն իրականացվում է փորձառու դասախոսների կողմից, ովքեր ունեն ՀՀ պետական մարմիններում, բուհերում, քաղաքական, հայեցողական պաշտոններում աշխատանքային ստաժ և դասախոսություններ կարդալու փորձ:

1. ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և Ակադեմիայի միջև կնքված «Քաղաքացիական ծառայողների «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված վերապատրաստման ծառայությունների» մատուցման պայմանագրի շրջանակներում Ակադեմիան իրականացնում է **քաղաքացիական ծառայողների վերապատրաստում**: Վերապատրաստումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2007 թվականի փետրվարի 5-ի N 107-Ա, 2007 թվականի հունվարի 26-ի N 76-Ա, 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 863-Ա որոշումներով հաստատված՝ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերին և ժամանակացույցին համապատասխան:

Ակադեմիան իրականացնում է քաղաքացիական ծառայողների աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված վերապատրաստման ծրագրեր՝ կառավարման հնարքների, կառավարչական որոշումների ընդունման մեթոդների, ֆինանսաբյուջետային, հաշվապահական և պետական կառավարման հմտությունների ուսուցման վերաբերյալ, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների առաջին վերապատրաստում:

ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստումն իրականացվում է հետևյալ ծրագրային թեմաներով՝

1. Առաջին վերապատրաստում՝

- *պետական կառավարման սահմանադրական հիմունքներ,*
- *քաղաքացիական ծառայության օրենսդրություն,*
- *կառավարչական հմտություններ:*

2. Ֆինանսական՝

- *ներքին աուդիտի գործառույթներ,*
- *բյուջետային գործընթացի գործառույթներ,*



Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

- գնումների կազմակերպման գործառույթներ,
- գանձապետական համակարգի գործընթացի գործառույթներ,
- հաշվապահական հաշվառման գործառույթներ:

3. Տարածքային կառավարում՝

տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանի Հանրապետությունում:

Աղյուսակ 6

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԱՆՑԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ (2010-2012թթ.)

2010թ.

Փաստացի հայտերի թիվ	Վերապատրաստում անցած մասնակիցների թիվ	Վերապատրաստում չանցած մասնակիցների թիվ
506	476	30
խմբերի թիվը՝ 21		

Վերապատրաստված քաղաքացիական ծառայողներն ըստ պաշտոնների խմբերի՝

- ✓ բարձրագույն - 3
- ✓ գլխավոր - 216
- ✓ առաջատար - 181
- ✓ կրտսեր - 76

Աղյուսակ 7

2011թ.

Փաստացի հայտերի թիվ	Վերապատրաստում անցած մասնակիցների թիվ	Վերապատրաստում չանցած մասնակիցների թիվ
538	523	15
խմբերի թիվը՝ 18		

Վերապատրաստված քաղաքացիական ծառայողներն ըստ պաշտոնների խմբերի՝

- ✓ բարձրագույն - 7
- ✓ գլխավոր - 327
- ✓ առաջատար - 133
- ✓ կրտսեր - 56

2012թ.

Փաստացի հայտերի թիվ	Վերապատրաստում անցած մասնակիցների թիվ	Վերապատրաստում չանցած մասնակիցների թիվ
304	288	16
խմբերի թիվ՝ 14		

Վերապատրաստված քաղաքացիական ծառայողներն ըստ պաշտոնների խմբերի՝

- ✓ բարձրագույն - 3
- ✓ գլխավոր - 168
- ✓ առաջատար - 93
- ✓ կրտսեր - 24

Դասընթացներն ավարտած քաղաքացիական ծառայողներին հանձնվել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից տրամադրված վերապատրաստման վկայականներ: Հաշվետու ժամանակահատվածի համար ողջ փաստաթղթային շրջանառության գործընթացն ավարտված է, և Ակադեմիան պայմանագրով նախատեսված փաստացի հայտերի հիման վրա ծառայությունները մատուցել է ամբողջությամբ, ժամանակին և պատշաճ մակարդակով:

2. ՀՀ տարածքային կառավարման նախարարության և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի միջև կնքված «Տեղական ինքնակառավարման մարմինների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման (վերապատրաստման) ծառայություններ»-ի գնման պայմանագրի շրջանակներում Ակադեմիան իրականացնում է համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների վերապատրաստում:

Համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների վերապատրաստման արդյունքները հետևյալն են՝

Փաստացի հայտերի թիվ	Վերապատրաստում անցած մասնակիցների թիվ	Վերապատրաստում չանցած մասնակիցների թիվ
800	740	164 համայնքի ղեկ.
		576 ավագանու անդ.
խմբերի թիվ՝ 35		

Վերապատրաստում անցած համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների թվաքանակը՝ ըստ ՀՀ մարզերի

№	ՀՀ մարզեր	Խմբերի քանակ	Փաստացի հայտերի թիվ	Վերապատրաստում անցած համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների ընդհանուր թիվ	Վերապատրաստման ժամանակահատված
1.	Վայոց Ձոր	2	50	26	15.05.12-17.05.12
2.	Տավուշ	2	50	44	22.05.12-24.05.12
3.	Կոտայք	3	60	56	05.06.12-07.06.12
4.	Լոռի	4	100	98	18.06.12-20.06.12 20.06.12-22.06.12
5.	Գեղարքունիք	4	80	78	26.06.12-28.06.12 02.07.12-04.07.12
6.	Արագածոտն	4	100	89	02.07.12-04.07.12 10.07.12-12.07.12
7.	Շիրակ	4	100	96	22.10.12-24.10.12 25.10.12-27.10.12
8.	Սյունիք	4	100	96	22.10.12-24.10.12 29.10.12-31.10.12
9.	Արմավիր	4	80	77	26.11.12-28.11.12 29.11.12-01.12.12
10.	Արարատ	4	80	80	03.12.12-05.12.12 06.12.12-08.12.12
	Ընդամենը	35	800	740	15.05.12-08.12.12

Դասընթացներն ավարտած համայնքների ղեկավարներին և ավագանիների անդամներին հանձնվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից տրամադրված նմուշի վերապատրաստման վկայականներ: Համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների վերապատրաստման մասով ողջ փաստաթղթային շրջանառության գործընթացն ավարտված է, և Ակադեմիան



պայմանագրով նախատեսված փաստացի հայտերի հիման վրա ծառայությունները մատուցել է ամբողջությամբ, ժամանակին և պատշաճ մակարդակով:

Այսպիսով, **2012 թվականին Ակադեմիայի կողմից իրականացվել են ընդհանուր թվով 1028 ունկնդիրների** (քաղաքացիական ծառայողներ, համայնքների ղեկավարներ և ավագանիների անդամներ) վերապատրաստման դասընթացներ (2011 թվականին՝ **523** ունկնդիր):

ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հրավերով 2012 թ. հունիսի 1-ից-5-ը Ակադեմիայի 6 աշխատակից դասախոսել են ԼՂՀ քաղաքացիական ծառայողների համար: Վերապատրաստումն իրականացվել է ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհրդի որոշումներով հաստատված՝ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերին և ժամանակացույցին համապատասխան:

Մեծ կարևորություն է տրվել ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ-Ակադեմիա գործակցության զարգացման առաջնահերթությունների հստակեցմանն ու դրանց լուծման հայեցակարգային մոտեցումների մշակմանը:

ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ-Ակադեմիա գործակցության տարբեր ծրագրերի շուրջ ձեռք են բերվել հետագա համագործակցության պայմանավորվածություններ:

Այլ դասընթացներ

Քաղաքացիական ծառայողների համար Ակադեմիայում կազմակերպվել են նաև հետևյալ վերապատրաստման դասընթացները՝

✓ 2012 թ. հունիսի 5-7-ը «Բանակցությունների վարման եղանակները» և «Կայուն զարգացման ռազմավարության իրականացումը» թեմաներով քաղաքացիական ծառայողների վերապատրաստում՝ Հարավային Կովկասում Շվեյցարիայի համագործակցության և զարգացման գործակալության (SDC) հայաստանյան գրասենյակի, Ժնևի միջազգային և զարգացման հետազոտությունների ինստիտուտի և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ:

Դասախոսություններով հանդես եկան Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Դաֆինա Գերչևան, ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը, ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի ազգային համակարգող Արամ Գաբրիելյանը, «Հանուն կայուն մարդկային զարգացման» ՀԿ նախագահ Կարինե Դանիելյանը, Ժնևի միջազգային և զարգացման հետազոտությունների ինստիտուտի միջազգային բնապահպանական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր Խորխե Վինուալեսը,



Ֆրանսիայի բանակցությունների ուսուցման և հետազոտությունների ինստիտուտի բիզնեսի դպրոցի պրոֆեսոր Տարիել Սիխարուլիձեն:

✓ 2012 թ. հոկտեմբերի 17-ին «Ինֆորմացիոն համակարգ և IT ծախսերի կառավարում» խորագրով սեմինար, որը վարել էր Ֆրանսիայի էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության գլխավոր քարտուղարության IT պատվիրակությունում ենթակառուցվածքի և գործընթացների կառավարիչ Սասուն Սոժին²:

✓ 2012 թ. հոկտեմբերի 29-31-ը, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և Միջմասնագիտական միջազգային հայկական խմբավորման (G2iA) միջև կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում, եռօրյա դասընթաց, որի մասնակիցները պետական կառավարման համակարգի և մի շարք մասնավոր ընկերությունների աշխատակիցներն էին: Դասընթացը վարել էր Հարություն Խաչատուրյանը, ով ունի 30 տարվա աշխատանքային փորձ տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման ոլորտում:

✓ 2012 թ. նոյեմբերի 1-ին Միջմասնագիտական միջազգային հայկական խմբավորման հետ համատեղ սեմինար՝ «Մարդկային ռեսուրսների կառավարում» թեմայով: Մասնակիցները ՀՀ կառավարման ակադեմիայի և մասնավոր կազմակերպությունների ներկայացուցիչներ էին: Սեմինարը վարում էր մարդկային ռեսուրսների և հասարակագիտության մասնագետ Ժաք Բահրին:

✓ 2012 թ. նոյեմբերի 19-21-ը, «Միջազգային արբիտրաժ» թեմայով քաղաքացիական ծառայողների վերապատրաստում՝ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության աջակցությամբ «Միջազգային կապերի կարողությունների հզորացում» (CABIR) ծրագրի շրջանակներում, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ:

✓ 2012 թ. նոյեմբերի 19-ին, «Տարածաշրջանային ինտեգրման և զարգացման հիմնահարցերը Հարավային Կովկասում» թեմայով երկշաբաթյա սեմինար, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, Ժնևի միջազգային և զարգացման հետազոտությունների ինստիտուտի, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի համագործակցությամբ և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության

² Սեմինարը կազմակերպվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի և Միջմասնագիտական միջազգային հայկական խմբավորման (G2iA) միջև կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում



Հայաստանի Հանրապետության պեդագոգական կառավարման ակադեմիա

գործակալության աջակցությամբ: Այս սեմինարն առանձնանում էր նրանով, որ այն տարածաշրջանային էր. մասնակիցները Հայաստանի և Վրաստանի պետական պաշտոնյաներ էին: 2012 թվականի դեկտեմբերի 3-ին Ակադեմիան հյուրընկալեց ՀՀ-ում արտակարգ և լիազոր դեսպան Կոնստանտին Օբոլենսկուն «Միջազգային կապերի կարողությունների հզորացում» (CABIR) ծրագրի շրջանակներում իրականացված սեմինարի արդյունքներն ամփոփելու նպատակով:

Շեշտը դնելով կրթական բարեփոխումների զարգացման փուլում մրցունակ, բարձրորակ մասնագետների պատրաստման խնդիրների նկատմամբ նոր մոտեցումների վրա՝ Ակադեմիան իրականացնում է հանրային ծառայողների աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված վերապատրաստման ծրագրեր՝ կառավարման հնարքների, կառավարչական որոշումների ընդունման մեթոդների, պետական կառավարման հմտությունների ուսուցման վերաբերյալ՝ առավելագույնս զարգացնելով **լրացուցիչ և շարունակական կրթության համակարգը:**

Մշակվել և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդ են ներկայացվել՝

- **Վերապատրաստման ծրագիր՝ Բարձրագույն պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների (այդ թվում՝ քաղաքացիական ծառայող համարվող աշխատակազմերի ղեկավարների)**

Այն ընդգրկում է հետևյալ թեմաները՝

- ✓ Սահմանադրական պատասխանատվության ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում,
- ✓ Ժողովրդավարական ինստիտուտների դերը ՀՀ հանրային կառավարման համակարգում,
- ✓ Անվտանգագիտության զարգացման հրամայականները Հայաստանի Հանրապետությունում,
- ✓ ՀՀ հանրային ծառայությունը կարգավորող օրենսդրությունը,
- ✓ Կառավարչական հմտություններ («Կառավարման հոգեբանություն», «Վարչարարների էթիկան հանրային կառավարման մեջ», «Հանրային ծառայողների աշխատանքի շահադրդում (մոտիվացիան)», «Հանրային ելույթներ և ներկայացումներ»):

- **Վերապատրաստման ծրագիր՝ «Ընտրական իրավունքի իրացման սահմանադրաիրավական կառուցակարգերը»** (բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների համար)

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդ են ներկայացվել նաև նշված ծրագրերով վերապատրաստողների ցուցակները:



Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

ՀՀ պետական կառավարման ակադեմիան և ՀՀ ֆինանսների նախարարությունը համատեղ նախաձեռնել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2007 թվականի փետրվարի 5-ի N 107-Ա որոշմամբ հաստատված վերապատրաստման ծրագրերում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու գործընթացը:

Արդյունքում, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2007 թվականի փետրվարի 5-ի N 107-Ա որոշմամբ հաստատված վերապատրաստման ծրագրերում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև մշակվել են ևս 6 նոր վերապատրաստման ծրագրեր (ֆինանսական շուկայի բնագավառի, լիցենզավորման համակարգի, ֆինանսա-տնտեսական վերլուծություններ իրականացնող մասնակիցների համար):

Մշակվել են նաև հետևյալ վերապատրաստման ծրագրերը՝

- ✓ Կադրային քաղաքականությունը պետական ծառայության համակարգում,
- ✓ Հանրային կապերը (PR) կառավարման համակարգում,
- ✓ Տեղեկատվության ազատության ոլորտում վերապատրաստման ծրագիր:

Վերապատրաստման գործընթացների գնահատման և դրանք ըստ արժեքային համակարգի դասակարգման արդյունքում կարելի է տարանջատել որոշ հիմնախնդիրներ, որոնց լուծումը կարող է խթան հանդիսանալ վերապատրաստման գործընթացների որակական փոփոխության և նպատակայնության ապահովման համար:

Առաջացած խնդիրներից կարևորվում են.

1) դասընթացների մեծ թվով կազմակերպիչների առկայություն, ինչը դժվարացնում է այդ գործընթացի ընդհանուր համակարգումը և նպատակային կազմակերպումը (միասնական ծրագրերի կիրառում, ծրագրերի նպատակային բարելավում, նոր ծրագրերի ներդրում՝ ելնելով հանրային ծառայության գործառույթների ապակենտրոնացումից, նեղ մասնագիտացումից, նորարարության առանձնահատկություններից և այլն),

2) իրականացվող վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների մոնիտորինգի և արդյունավետության գնահատման համակարգի կիրառման անհրաժեշտությունը,

3) դասընթացների արդյունքում հանրային ծառայողի մոտ մասնագիտական գիտելիքների, կարողությունների և կառավարչական հմտությունների փոփոխությունների գնահատմանը, ինչպես նաև վարչական էթիկայի բարձրացմանն ուղղված քայլերը:

Անձնակազմի ուսուցման քաղաքականությունը հիմնվելով ուսուցման ծրագրի վրա և լինելով կողմնորոշված անձնակազմի կարիքներին ու պահանջներին՝ նպատակաուղղված է գիտելիքների, հմտությունների, փորձի և տեղեկատվության փոխանակմանը:



Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Վերապատրաստման կարիքների գնահատման գործընթացն առաջնային կարևորություն ունի Ակադեմիայի համար: Քաղաքացիական ծառայության համակարգում վերապատրաստման կարիքների խորքային գնահատում իրականացնելն անհրաժեշտ է ավելի նպատակային ու հասցեական ծրագրեր մշակելու և իրականացնելու համար:

Անհրաժեշտ է վերանայել առկա վերապատրաստման ծրագրերը և գնահատել դրանց օգտակարությունը հանրային ծառայողների համար, ինչպես նաև փորձարկել և վերանայել նյութերը/բովանդակությունը/մեթոդները:

Պարզել, թե ինչ ճշգրտումներ/լրացումներ են անհրաժեշտ բովանդակության և մեթոդաբանության մեջ:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԻԵՐԸ

Որդեգրել այնպիսի բարեփոխումներ, որոնք հիմնված կլինեն հետևյալ սկզբունքների վրա.

- 1) կադրերի պատրաստման, վերապատրաստման գործընթացի շարունակականություն,
- 2) ուսուցման համապարփակություն և համակողմանիություն,
- 3) կրթական գործընթացի ձևավորում, որը կներառի կազմակերպչական կառուցվածքը, կիրառման եղանակը, պատրաստվածության մակարդակը, ուսուցման բովանդակությունը և տևողությունը,
- 4) ինովացիոն բաղադրամասի գերակայությունը ուսուցման գործընթացում՝ կապված մասնագիտական գիտելիքների և կարողությունների, ինչպես նաև նոր վարչարարության սկզբունքների ներդրման հետ,
- 5) վերապատրաստման ծրագրերի նորովի կազմում՝ վերապատրաստվողների մասնագիտական պարտականություններին և աշխատանքային խնդիրներին համապատասխան,
- 6) իրականացման գործընթացների փուլային հաջորդականություն, ուսուցման բովանդակության նորացում և ընդլայնում:

Ներդնել քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարիքների գնահատման համակարգ՝ միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ, ընդհանուր և միասնական մոտեցումներով օրենսդրական դաշտի մշակման, օրենսդրությամբ վերապատրաստումների կարիքների գնահատման ու իրականացման սկզբունքների, մեթոդների և գործընթացների ամրագրման, իրականացման պատասխանատուների, քաղաքացիական ծառայողների տարբեր նպատակային խմբերի իրական կարիքների բացահայտման, վերապատրաստման կարիքների գնահատման հիմնական մեթոդների ու գործիքների (հարցաթերթեր, հետազոտություններ, հարցազրույցներ, բովանդակության, նպատակների, փաստաթղթերի վերլուծություններ) սահմանման,



Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

մեթոդական ուղեցույցի մշակման ու հաստատման, դրանց հիման վրա վերապատրաստման մոդուլների մշակման, վերապատրաստման կարիքների գնահատման գործառույթի ինստիտուցիոնալացման, համապատասխան մարմինների անձնակազմի կառավարման պատասխանատու ստորաբաժանումների պարտականությունների սահմանման, աշխատակիցների վերապատրաստման դասընթացների, մշակման ու կազմակերպման, վերապատրաստման էլեկտրոնային կառավարման համակարգի ստեղծման, համակարգի փուլային ներդրման ու արդյունքների գնահատման միջոցով:

Վերապատրաստման գործընթացի կազմակերպման, իրականացման և այդ գործընթացն ապահովող **հիմնական տարրերն են՝**

- 1) վերապատրաստման պահանջարկի գնահատում,
- 2) վերապատրաստման առաջարկի գնահատում,
- 3) վերապատրաստման պահանջարկի և առաջարկի վերլուծություն,
- 4) վերապատրաստման տարեկան ծրագրի նախագծի կազմում,
- 5) վերապատրաստման տարեկան ծրագրի հաստատում և իրականացում,
- 6) վերապատրաստման արդյունքի գնահատում,
- 7) ուսումնամեթոդական բազայի լրացում:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1) Հանրային ծառայության ոլորտի համալրում անհրաժեշտ մասնագիտական կադրերով, ինչը կնպաստի հանրությանը ծառայությունների մատուցման որակի և արդյունավետության բարձրացմանը,

2) կադրերի վերապատրաստում, ինչը կապահովի կադրերի մրցունակությունը հանրապետությունում և արտերկրում,

3) կադրերի վերապատրաստում, ինչը կնպաստի հանրային ծառայության ոլորտում ներդրված արդիական համակարգերի արդյունավետ գործարկմանը և ինովացիոն գործունեության զարգացմանը,

4) կադրային ներուժի զարգացում, ինչը հնարավորություն կընձեռի Հայաստանի ինտեգրմանը համաշխարհային միասնական տեղեկատվական տարածքին, էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմանը,

5) աշխատանքի շուկայում վերապատրաստված մրցունակ կադրերի առկայություն, ինչը կնպաստի ստեղծագործական գործունեության զարգացմանը և մրցակցությանը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կարևորվում է նաև համագործակցության աշխարհագրության ընդլայնումը ոչ միայն տեղական, այլև միջազգային և արտասահմանյան կազմակերպությունների հետ:

Այսպես՝ հաշվետու տարվա ընթացքում ստորագրվել են համագործակցության հուշագրեր մի շարք **օտարերկրյա բուհերի և կազմակերպությունների** հետ, մասնավորապես՝

- 2012 թվականի ապրիլի 26-ին համագործակցության հուշագիր է ստորագրվել **Լեհաստանի ազգային կառավարման դպրոցի (KSAP)** հետ: Համագործակցության նպատակը երկկողմ սեմինարների, վերապատրաստման դասընթացների և այլ միջոցառումների (կլոր սեղաններ, գիտաժողովներ) կազմակերպումն է, հանրային ոլորտի աշխատակիցների մասնագիտական զարգացման նպատակով դասախոսների և ուսանողների, քաղաքացիական ծառայության ուղղությամբ տեղեկատվության և վարչական բարեփոխումների ոլորտում ունեցած լավագույն փորձի փոխանակումը, ինչպես նաև նշված ոլորտներում միջազգային ծրագրերի համատեղ որոնումը, մշակումը և իրականացումն է:
- 2012 թվականի հունիսի 21-ին կնքվեց հուշագիր **Ֆրանս-հայկական առևտրաարդյունաբերական պալատի** հետ: Հուշագրի նպատակը ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրանտների գործնական դասընթացների կազմակերպումն է Ֆրանս-հայկական առևտրաարդյունաբերական պալատում և այլ համատեղ ծրագրերի մշակումն ու իրականացումը:
- 2012 թվականի հունիսի 24-ին ստորագրվեց համագործակցության պայմանագիր **հայ-ֆրանսիական ֆեդերացիայի** հետ: Պայմանագրի նպատակը ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսանողների և դասախոսական կազմի պրակտիկայի իրականացումն է Ֆրանսիայում:
- 2012 թվականի հունիսի 25-ին ստորագրվեց համագործակցության պայմանագիր **Էքս-Ան-Պրովանսի «Սիանս Պո» (քաղաքագիտության) համալսարանի** հետ: Համագործակցության հեռահար նպատակն է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կազմում ստեղծել Էքս-Ան-Պրովանսի «Սիանս Պո» (քաղաքագիտության) համալսարանի մասնաճյուղ և կազմակերպել համատեղ ուսումնական ծրագրեր և հետազոտական աշխատանքներ, ինչպես նաև իրականացնել ուսանողների և դասախոսների փոխանակում:
- 2012 թվականի հուլիսի 10-ին ստորագրվեց համագործակցության պայմանագիր **Միջմասնագիտական միջազգային հայկական խմբավորման (G2iA)** հետ: Պայմանագրի նպատակն է զարգացնել քաղաքացիական ծառայողների հմտությունները ֆրանսիական փորձի հիման վրա: Համագործակցության շրջանակներում արդեն իսկ իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնց նպատակն է խթանել ՀՀ-ում քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացը, ինչպես նաև ստեղծել համապատասխան մթնոլորտ պետական հաստատությունների և մասնավոր հատվածի արդյունավետ փոխգործակցության համար:
- 2012 թվականի դեկտեմբերի 20-ին կնքվեց համագործակցության պայմանագիր **Ռուսաստանի Դաշնության Նախագահին կից «Ռուսաստանի Ժողովրդական տնտեսության և պետական ծառայության ակադեմիա»** բարձրագույն մասնագիտական կրթության դաշնային պետական բյուջետային կրթական հաստատության հետ: Համագործակցության նպատակն է Ռուսաստանի

Դաշնության և Հայաստանի Հանրապետության պետական ծառայողների լրացուցիչ մասնագիտական ուսուցմանը, վերապատրաստմանն ու որակավորման բարձրացմանն ուղղված կրթական ծրագրերի իրականացումը, ինչպես նաև վերոնշյալ ակադեմիաների դասախոսների վերապատրաստման և որակավորման բարձրացման գծով մեթոդական և գիտական հարցերի ոլորտներում համագործակցությունը:

2012 հաշվետու տարում իրականացված փոխայցելություններ

- Հունիսի 21-ից 27-ը Ֆրանսիայում ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պատվիրակությունը մի շարք հանդիպումներ է ունեցել.
 - ✓ Մարսելի «Մշակույթի և երիտասարդության հայկական տան» նախագահ, Մարսելի 13-րդ և 14-րդ համայնքների թաղապետ *Գարո Հովսեփյանի* հետ: Հանդիպման արդյունքում ձեռք բերվեց պայմանավորվածություն Ակադեմիայի ուսանողների պրակտիկան այնտեղ անցկացնելու վերաբերյալ: Ակադեմիայի պատվիրակությունը ներկա է գտնվել Մարսելի մշակույթի տան հիմնադրման 36-ամյակին նվիրված երեկոյին, որին մասնակցում էր նաև Երևանի քաղաքապետարանի պատվիրակությունը՝ Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի գլխավորությամբ:
 - ✓ Ֆրանսիայի խորհրդարանում Հայոց ցեղասպանության լրբինգն իրականացնող պատգամավոր *Վալերի Բուայեի* հետ,
 - ✓ ծագումով հայ հանրահայտ անձանց՝ Անրի Վերնոյի որդու՝ *Պապրիկ Մալաքյանի*, նաև Փարիզի տարբեր բուհերում դասավանդող հայազգի դասախոսների, պրոֆեսորների հետ՝ հետազայում մյուս բուհերի հետ նույնպես համագործակցության ծրագրեր իրականացնելու նպատակով:
- Հուլիսի 12-ից 17-ն ընկած ժամանակահատվածում Ակադեմիա այցելեցին ֆրանսիական մի շարք կազմակերպությունների և «Սիանս Պո» համալսարանի պատվիրակները, մասնավորապես՝ Միջմասնագիտական միջազգային հայկական խմբավորման (G2iA) փոխնախագահ Ժաք Բահրին և (G2iA)-ի հայ-ֆրանսիական ֆեդերացիայի համանախագահ, ՀՀ-ում ֆրանսիական համայնքի նախագահ Ռայմոնդ Յեզեգույանը, «Սիանս Պո» համալսարանի պատվիրակ Ժիլբերտ Տերտերյանը, ինչպես նաև Հայաստանում G2iA կազմակերպության ներկայացուցիչ Արմեն Վալյանը:
- Հոկտեմբերի 1-ին Ակադեմիան հյուրընկալեց Լիբանանի Հայկազյան համալսարանի նախագահ Վերապատուելի Փօլ Հայտութեանին: Հայկազյան համալսարանի ռեկտորին շնորհվեց նաև ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ոսկե մեդալ:
- Հոկտեմբերի 12-ին ՀՀ պետական կառավարման ակադեմիան հյուրընկալել էր Ֆրանսիայի Մարսել քաղաքի 13-րդ և 14-րդ համայնքների թաղապետ, «Հայ մշակույթի տան» նախագահ *Գարո Հովսեփյանին*:

- Նոյեմբերի 2-ին ՀՀ պետական կառավարման ակադեմիան կրկին հյուրընկալել էր Միջմասնագիտական միջազգային հայկական խմբավորման (G2iA) փոխնախագահ Ժաք Բահրիին և (G2iA)-ի հայաստանյան ներկայացուցչության ղեկավար Արմեն Վալյանին: Կողմերը հանդիպման ընթացքում ամփոփեցին արդեն իրականացված մի շարք համատեղ ծրագրեր և ընդգծեցին հետագա համագործակցության հիմնական ուղղությունները:

Մասնակցություն գիտաժողովներին, սեմինարներին

- GIZ կազմակերպության և Թբիլիսիի պետական համալսարանի կողմից Թբիլիսիում կազմակերպված «Տեղական ինքնակառավարումը Հարավային Կովկասում» թեմայով սեմինար, 2012 թվականի ապրիլի 1: Սեմանարին մասնակցում էին Հարավային Կովկասի հանրապետությունների ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները: Ներկայացվել է զեկույց Ակադեմիայի գիտաուսումնական աշխատանքների և հանրային ու տեղական ինքնակառավարման, ինչպես նաև կայուն զարգացման ոլորտներին առնչվող հարցերին վերաբերող և Ակադեմիայում դասավանդվող առարկայական ծրագրերի վերաբերյալ:
- «Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրներ» (փիլիսոփայական և հոգեբանական տեսանկյուններ), ԵՊՄՀ, Միջազգային գիտաժողով, 2012թ., ապրիլի 16-17
- «Человек в информационном обществе», международная научно-практическая конференция, 31 мая-1 июня 2012г.
- Աշխատանքային այց Գերմանիա, GIZ-ի կողմից կազմակերպված «Տարածքային բարեփոխումներ» թեմայով գիտական կոնֆերանս, 2012 թվականի սեպտեմբերի 2-9-ը: Գերմանիայի կառավարման համակարգին ծանոթանալու նպատակով կայացան հանդիպումներ Պոտոսդամի համալսարանի համայնքային հարցերով գիտական ինստիտուտի, Սաքսոնիայի ներքին գործերի նախարարության տարածքային կառույցների, Դրեզդենի վարչական մարմնի ներկայացուցիչների և Գլասհյուլթե քաղաքի քաղաքապետի հետ: Այցի ընթացքում ձեռք բերվեցին մի շարք պայմանավորվածություններ, մասնավորապես՝ Պոտոսդամի համալսարանի համայնքային հարցերով գիտական ինստիտուտի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց գիտական և կրթական ոլորտներում համագործակցությունը խորացնելու վերաբերյալ:
- NISPAcee (Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների կառավարման ինստիտուտների և դպրոցների միություն) 20-րդ՝ «Հանրային կառավարման արևելքն ու արևմուտքը. զարգացման քսան տարիներ» խորագրով միջազգային գիտաժողով, Օհրիդ, Մակեդոնիա, 2012 թ: Ներկայացվել է «Փոքր և միջին ձեռնարկությունների ուսուցմանն աջակցության հանրային քաղաքականությունը Հայաստանում» հոդվածը:

- ԵՄ ՏԵՄՊՈՒՍ IV ծրագրի շրջանակներում իրականացվող «Հատուկ կարիքներով մարդկանց հասանելիությունը հասարակությանը» (ASPIRE) ծրագրի գործողություններին նվիրված սեմինար՝ կազմակերպված Կոշիցեի տեխնիկական համալսարանի կողմից, Կոշիցե, Սլովակիա, 2012 թ:
- «Փոփոխվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողով, Երևան, ապրիլի 16-17, 2012թ.:
- «Հասարակություն, ընտանիք, դեռահաս. արդիական խնդիրներ Հայաստանում և Սփյուռքում» միջազգային գիտագործնական համաժողով, ՀՀ Սփյուռքի նախարարություն, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան, Հայկական հոգեվերլուծական ընկերություն, Երևան, 2012թ.:
- V Îãæáóíáðíáíáÿ íáó÷íí-íðáèðè÷ãñêáÿ êíóáðáíóèÿ, Îñêâà, ÐÓÃÍ, 19-20 àìðáèÿ, 2012 ã.,
- Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրումը կրթական համակարգում:
- GIZ-ի կողմից կազմակերպված աշխատաժողով՝ նվիրված էլեկտրոնային ուսուցմանը:
- «Հազարամյակի զարգացման նպատակների (ՀՁՆ) արագացման գործընթացի կիրառումը Հայաստանում» սեմինար, Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման ծրագիր, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, Երևան, 2012 թ.:
- Twinning ծրագրի շրջանակներում կազմակերպված կոսնորցիում, որն ուղղված էր Հայաստանի Հանրապետությունում եռաստիճան կրթության ամրապնդման նախագծի քննարկմանը և անցկացվում էր ՍԱՏՏՈ փորձագետներ Ֆրանկ Մըք Մահոնի և Օլիվեր Վանհոնակերի կողմից:
- Խ. Արոյանի անվան մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված գիտաժողով՝

Զեկույցներ՝

Մարիամ Մարգարյան. «Քաղաքական արդիականացման արժեքային համակարգի էվոլյուցիան»

Կարեն Գալոյան. «Նոր հանրային կառավարումը որպես քաղաքական արդիականացման բաղադրիչ»

Ռոբերտ Առնոյան. «Հայ ինքնության արդիականացման հիմնախնդիրները» (հայցորդ)

Գուրգեն Սիմոնյան. «Ազգային շահերը՝ քաղաքական արդիականացման բաղադրիչ» (հայցորդ)

- Ռուսաստանի Դաշնության Նախագահին կից «Ռուսաստանի Ժողովրդական տնտեսության և պետական ծառայության ակադեմիայի» գեներալային բյուջետավորման և կառավարման միջազգային կենտրոնի հրավերով «Գեներալային բյուջետավորում» թեմայով սեմինար՝ 72 ժամ տևողությամբ, ք.Մոսկվա, 2012 թվականի դեկտեմբերի 17-21-ը: Մշակվեց Հայաստանի գեներալային հավասարության վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ: Այն տեղադրվել է Ռուսաստանի Ժողովրդական տնտեսության և պետական

ծառայության ակադեմիայի կայքում՝ <http://genderbudgets.ru/index/armenija/0-8>: Նշված փաստաթուղթը կազմվել է վիճակագրական տվյալների, վերջին մարդահամարի, սոցիոլոգիական հարցումների, պաշտոնական և միջազգային կայքերի հիման վրա:

Սեմինարի ընթացքում քննարկումներ ծավալվեցին գենդերային բյուջետավորման վերապատրաստման ծրագրերի վերաբերյալ, ինչպես նաև ուրվագծվեցին դրանք իրականացնելու համար անհրաժեշտ մոտեցումները: Առաջիկայում կատարաստվի համապատասխան ուսումնական մոդուլ գենդերային բյուջետավորման վերաբերյալ: Սեմինարի ընթացքում քննարկվեցին հետագա համագործակցության, ինչպես նաև գենդերային բյուջետավորման հիմնախնդիրների վերաբերյալ համատեղ գործողություններին առնչվող հարցեր:

Հաշվետու տարում բանակցություններ են տարվել նաև **օտարերկրյա հետևյալ կրթական հաստատությունների** հետ:

➤ **Լիբանանի Հայկազյան համալսարան**

Համագործակցության նպատակը երկկողմ սեմինարների և վերապատրաստման դասընթացների, մասնագիտական զարգացման նպատակով դասախոսների և ուսանողների փոխանակման, համատեղ միջոցառումների (կլոր սեղաններ, գիտաժողովներ, սեմինարներ) իրականացումն է, ինչպես նաև գրադարանային ֆոնդի փոխանակումը: Այս ուղղությամբ հաջորդ քայլը երկու ռեկտորների հանդիպման կազմակերպումն է Հայաստանում կամ Լիբանանում վերոհիշյալ պայմանագիրը ստորագրելու համար:

➤ **Ֆրանսիայի Կառավարման ազգային դպրոց (I'ENA- Ecole nationale d'administration)**

Այս ուղղությամբ արդեն իրականացվել են առաջին քայլերը և ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ: Համագործակցության իրագործմանը մեծապես աջակցում են Ժաք Բահրին և ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Անրի Ռենոն: Համագործակցության նպատակն է իրականացնել ուսանողների փոխանակում, վերապատրաստման դասընթացների համատեղ մշակում և իրականացում, սեմինարների կազմակերպում:

Ըստ ձեռք բերված պայմանավորվածության՝ նախատեսվում է ստորագրել համագործակցության հուշագրեր:

Ներպետական համագործակցության հուշագրեր

- 2012 թվականի մարտի 30-ին համագործակցության հուշագիր ստորագրվեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ Ակադեմիայի ուսանողների գիտահետազոտական պրակտիկան ՀՀ

պաշտպանության նախարարությունում կազմակերպելու, Ակադեմիայում ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպման, ինչպես նաև երկուստեք փորձի փոխանակման, համատեղ միջոցառումների անցկացման վերաբերյալ:

- 2012 թվականի դեկտեմբերի 6-ին կնքվեց երկկողմ համագործակցության համաձայնագիր Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության Հայաստանի Հանրապետության ազգային ներկայացուցչության հետ: Համագործակցության նպատակն է համատեղ իրականացնել հասարակական, մշակութային, գիտական և այլ ծրագրեր, համատեղ կազմակերպել երիտասարդների ռազմահայրենասիրական ոգու դաստիարակմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև կազմակերպել և անցկացնել համատեղ գիտաժողովներ, սեմինարներ, քննարկումներ և այլ միջոցառումներ:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռազմավարական նոր ուղղությունն է համագործակցությունը ոչ միայն ՀՀ պետական համակարգի, այլ նաև *մասնավոր հարվածի հետք*: Այս առումով ձեռնարկվել են առաջին քայլերը, մասնավորապես՝ 2011 թվականի դեկտեմբերի 6-ին «ՎիվաՍել-ՄՏՍ» («Ղ-Տելեկոմ») փակ բաժնետիրական ընկերության հետ ստորագրված համագործակցության հուշագրի հիման վրա, որը նախատեսում էր կրթական ոլորտում համատեղ ուժերով մի շարք ծրագրեր իրականացնել: ՀՀ պետական կառավարման ակադեմիան Ընկերությանը ներկայացրեց 2013թ. վերապատրաստման ծրագրերը: Ի դեպ, 2012թ. վերապատրաստման դասընթացներին ակտիվորեն մասնակցեցին նաև «ՎիվաՍել-ՄՏՍ» («Ղ-Տելեկոմ») փակ բաժնետիրական ընկերության աշխատակիցները: Համագործակցությունը նախատեսում է նաև ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսանողների կառավարչական պրակտիկայի կազմակերպում «ՎիվաՍել-ՄՏՍ» («Ղ-Տելեկոմ») փակ բաժնետիրական ընկերությունում:

Հաշվետու տարում ուսումնասիրվել են մի շարք միջազգային կրթական հաստատությունների և կազմակերպությունների կողմից առաջարկվող ծրագրեր, որոնց համապատասխան ընթացք է տրվել:

Այսպես՝

- ՀՀ պետական կառավարման ակադեմիան այժմ բանակցում է Բրիտանական որակավորումներ (British Qualifications) կազմակերպության բացառիկ ներկայացուցիչ Առաջնորդների որակավորումներ (Leaders Qualifications) հունաստանյան գրասենյակի հետ, որն առաջարկում է Ակադեմիայում հիմնել հավատարմագրված կենտրոն, որտեղ կկազմակերպվեն անգլերենի ESOL քննություններ և կիրականացվեն վերապատրաստումներ մի շարք որակավորումների գծով: Մոտ ապագայում նախատեսվում է կազմակերպել



հեռահար (online) քննարկում համագործակցության մանրամասների վերաբերյալ:

- Քեմբրիջի համալսարանը Բաց հասարակություն հիմնադրամի (OSI) հետ համատեղ ՀՀ պետական կառավարման ակադեմիային է ներկայացրել մեկամսյա ծրագիր, որով Ակադեմիայի դասախոսական անձնակազմը Քեմբրիջի համալսարանի գրադարաններում աշխատելու և համապատասխան մասնագիտությունների ոլորտներում օտարերկյա գիտնականների հետ համագործակցելու հնարավորություն է ստանում:
- Ներկայումս Ակադեմիայի առաջնային նպատակներից է լրամշակել և ընդլայնել Ակադեմիայում իրականացվող վերապատրաստման մեթոդների և մեխանիզմների շրջանակները: Այս նպատակով Ակադեմիան համագործակցության առաջարկ է ներկայացրել աշխարհում մեծ ճանաչում ունեցող մի շարք բարձրագույն կրթական հաստատությունների, որոնց թվում են՝ Մեծ Բրիտանիայի Օքսֆորդի, Քեմբրիջի, Գերմանիայի Լայպցիգի, ԱՄՆ-ի Հարվարդի, Բոսթոնի համալսարանները և Ֆլեթչերի դպրոցը (Թաֆթս համալսարան):

Թվինինգ և Թայեքսի ծրագրային առաջարկներ պատրաստելու գործընթացում օժանդակություն է ցուցաբերել ՀՀ Նախագահի աշխատակազմը և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը:

Մի շարք միջազգային կազմակերպությունների ներկայացվել են **մրցույթների մասնակցության հայտեր:**

Թվինինգի (Twinning) շրջանակներում «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման» ծրագիր

Ծրագրի նպատակները՝

- ✓ Ծրագրի առաջին և կարևոր նպատակը թերևս Ակադեմիայի գործունեության առարկայի և նպատակի ներդաշնակեցումն է ԵՄ չափանիշներին, նրա կառուցվածքի, գործունեության իրավական, կազմակերպչական խնդիրների հստակեցումը և գործելակերպի մոտարկումը ԵՄ լավագույն փորձ և ավանդույթներ ունեցող կենտրոնի (կենտրոնների) մոդելին:
- ✓ Ծրագիրը նպատակ է հետապնդում նաև հզորացնելու Ակադեմիայի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարման համակարգի համար հիմնարար, գիտական-կիրառական հետազոտություններ, փորձագիտական արժևորումներ և խորհրդատվություններ իրականացնելու կարողությունները, ինչպես նաև մասնագետների պատրաստման, հանրային ծառայողների վերապատրաստման և որակավորման բարձրացման, լրացուցիչ, բարձրագույն մասնագիտական (այդ թվում՝



MPA) և հետքուհական ուսումնական ծրագրերի մշակման և իրականացման բնագավառներում ԵՄ չափորոշիչներին համապատասխան կարողությունների ապահովումը:

✓ Ծրագրի առաջնահերթ նպատակներից է նաև հանրային կառավարման ոլորտի տեղեկատվական ապահովման, համապատասխան մարմինների, ծառայողների, ինչպես նաև հանրության իրազեկության բարձրացման, կառավարման համակարգում բարեփոխումների կայունության ապահովման համար անհրաժեշտ կարողությունների հզորացումը:

Ակնկալվող արդյունքները

Ակնկալվում է, որ ծրագրի արդյունքում կամրագրվեն այնպիսի պարտադիր արդյունքներ, ինչպիսիք են, օրինակ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից հստակ սահմանված գործունեության առարկան և նպատակը, կազմակերպական կառուցվածքը, հավաքագրված և վերապատրաստված աշխատակազմը:

Ծրագրի ավարտին Ակադեմիան պետք է ունենա իր գործունեությունը կարգավորող այնպիսի կոնկրետ կանոնակարգեր, ինչպիսիք են՝ հանրային կառավարում մասնագիտությամբ ՀՀ-ում կադրերի պատրաստման չափորոշիչները, կառավարման համակարգում մարդկային ռեսուրսների պահանջարկի ուսումնասիրման և մշտադիտարկման հստակ սահմանված մեխանիզմները, մարդկային ռեսուրսների կառավարման և զարգացման մշակված մեթոդաբանությունը, հանրային ծառայողների վերապատրաստման ուղղահայաց և հորիզոնական կարիքների բացահայտման և այդ կարիքների բավարարմանը միտված միջոցառումների և վերապատրաստման ծրագրերի (այդ թվում՝ էլ. ուսուցման) մշակման և այդ ծրագրերով վերապատրաստումների իրականացման սահմանված կանոնակարգերը, վերապատրաստված և լիցենզավորված (այդ թվում՝ նաև հրավիրյալ) դասախոսների և վերապատրաստողների կազմը, հանրային կառավարում մասնագիտությամբ հետազոտությունների թեմաների ընտրության և բաշխման կարգը, հանրային կառավարման համակարգի տեղեկատվական ապահովման կարգը և այլն:

Ակնկալվող արդյունքներն ապահովելու նպատակով պետք է ձևավորվի հստակ ժամկետներով և պատասխանատուներով «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման միջոցառումներ»-ի ցանկ, որը կհաստատվի ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի կողմից:

Ի տարբերություն Թվինինգ այլ ծրագրերի՝ ակնկալվում է, որ «ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման ծրագրի» արդյունքները, որպես կայուն արժեք, պատկանում են ոչ թե մեկ կառավարման մարմնի, այլ ՇԵ (շահառու երկիր) հանրային կառավարման ողջ համակարգին:



ՀՀ պետական կառավարման ակադեմիան մասնակցության հայտ է ներկայացրել նաև **Թայքսի (TAIEX) (Տեխնիկական աջակցություն և տեղեկատվության փոխանակում) շրջանակներում «Հանրային ծառայողների վերապատրաստման կարիքների գնահատման մեթոդաբանություն» նախագծի** իրագործման համար:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի համագործակցության շրջանակներն ընդլայնելու և կանոնադրական խնդիրներից բխող տարբեր ծրագրերի իրականացման նպատակով վերջինս շարունակում է ակտիվորեն մասնակցել զանազան միջազգային կրթական ծրագրերի: Այս առումով ՀՀ պետական կառավարման ակադեմիան արդեն ընդգրկված է հետևյալ ծրագրերում՝

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՀԵՏԱԳԱ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

Ծրագրի տևողությունը՝ 2012 թվականի սեպտեմբերի 5-ից 2013 թվականի դեկտեմբերի 31-ը:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ✓ Որակի ապահովման քաղաքականություն և գործընթացներ
- ✓ Որակի ապահովման հայեցակարգ
- ✓ Որակի ապահովման գործընթացների անընդհատ և հետևողական մշտադիտարկման մեխանիզմներ
- ✓ Որակի ապահովման գործընթացների արդյունավետության չափելիության հստակ մեխանիզմներ
- ✓ Դասավանդման, ուսումնառության որակի և արդյունավետության բարձրացմանը նպաստող մեխանիզմներ
- ✓ Ուսանողների գնահատման մշակված, ներդրված և կիրարկվող համակարգ, որը նպատակաուղղված է գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման և գնահատման առավել օբյեկտիվ, թափանցիկ և արդյունավետ գործընթացի կազմակերպմանը
- ✓ Որակի ներքին ապահովման ձեռնարկ
- ✓ Որակի կառավարման կարգեր:

Կրթական ծրագրերի մշակման, մշտադիտարկման և պարբերաբար վերանայման, ինչպես նաև որակի գնահատման և հաստատման գործընթացներում, որպես ներքին



շահակիցներ, ներգրավված են Ակադեմիայի վարչական, գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողները, որպես արտաքին շահակիցներ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, գերատեսչությունները, մասնավոր կազմակերպությունները, հասարակությունը:

Ծրագրի շրջանակներում Ակադեմիայում նոյեմբերի 7-ից 30-ը շաբաթական երկու անգամ կազմակերպվեցին թեյնինգներ և մոդերացիաներ Ակադեմիայի վարչական, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնաօժանդակ ստորաբաժանումների աշխատակիցների, ինչպես նաև ուսանողների մասնակցությամբ:

Ակադեմիայի ռեկտորի հրամանով ձևավորվել է երեք հանձնաժողով, որոնց առջև դրվել են հստակ խնդիրներ, և նրանք սկսել են իրենց աշխատանքները: Հանձնաժողովներում ընդգրկվել են թե՛ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, թե՛ ուսումնաօժանդակ ստորաբաժանումների աշխատակիցներ, ինչպես նաև ուսանողներ:

Ակադեմիայի Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը համալրվել է անհրաժեշտ համակարգչային տեխնիկայով, գույքով, ինչպես նաև ստեղծվել են որակյալ աշխատանք ապահովող պայմաններ:

2.ՏԵՄՊՈՒՍ IV ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐՈՎ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ» (ASPIRE) ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիան ՏԵՄՊՈՒՍ IV ծրագրի շրջանակներում իրականացվող «Հատուկ կարիքներով մարդկանց հասանելիությունը հասարակությանը» (ASPIRE) ծրագրի կոնսորցիումի անդամ է:

Ծրագրի տևողությունը 3 տարի է (2012թ. հոկտեմբեր-2015 թ. սեպտեմբեր):

Ծրագրի կոնսորցիումի մասնակից հաստատություններն են՝

- Իլիա պետական համալսարան, Վրաստան (համակարգող)
- Էդջ Հիլլ համալսարան, Միացյալ Թագավորություն
- Պիրամիդ խումբ, Գերմանիա
- Լիմերիկի տեխնոլոգիական ինստիտուտ, Իռլանդիա
- Կոշիցեի տեխնիկական համալսարան, Սլովակիա
- Շ. Ռութավելու անվան պետական համալսարան, Վրաստան
- Ախալցխի պետական մանկավարժական համալսարան, Վրաստան
- Վրաստանի պետական կառավարման ինստիտուտ, Վրաստան
- Վրաստանի փոստային առաքման ասոցիացիան, Վրաստան
- Եվրասիա միջազգային համալսարան, Հայաստան



Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

- Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, Հայաստան
- Գորիսի պետական համալսարան, Հայաստան
- Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա, Հայաստան
- «Հույսի կամուրջ» ՀԿ, Հայաստան:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ութ մոդուլներից բաղկացած ուսումնական ծրագրի ստեղծում հատուկ կարիքներով մարդկանց համար: Այն բաղկացած է ներածական և խորացված մոդուլներից, որոնք կներառվեն համալսարանների, պետական կառավարման ինստիտուտների և հասարակական կազմակերպությունների ուսումնական ծրագրերում:

Յուրաքանչյուր հաստատությունում կմշակվի և կսահմանվի մուտքի կապի պատասխանատուի դերը, որը կնպաստի այդ ինստիտուտներում հաշմանդամների մուտք գործելու և հետագա ուսումնառության մատչելիությանը:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումներին **տեղեկատվա-տեխնոլոգիական (SS)** օժանդակություն ցուցաբերելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- ✓ Ակադեմիայի լոկալ ցանցի ստեղծում
- ✓ Ինտերնետ հասանելիության ապահովում
- ✓ Ակադեմիայի տարածքում ինտերնետ կապի ապահովում՝ Wi-Fi կապի միջոցով
- ✓ Ակադեմիայի կայքի ստեղծում և գործարկում
- ✓ Ակադեմիայի էլեկտրոնային փոստի ստեղծում
- ✓ Ակադեմիայի ցանցային կառավարման ապահովում
- ✓ Ակադեմիայի տեղեկատվական համակարգի տեխնիկական ծրագրային սպասարկում
- ✓ Հակավիրուսային պաշտպանության ապահովում
- ✓ Անվտանգության տեսախցիկների տեղակայում
- ✓ Համակարգիչների և կից սարքերի համալրում, ձեռքբերում
- ✓ Սերվերի ծրագրային ապահովում և շահագործում
- ✓ Մշակման փուլում են տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (S&S) ուսումնական մոդուլները, որոնք կարող են օժանդակել ուսումնական գործընթացներին
- ✓ Աշխատանքներ են տարվում թվային հեռախոսակապի ստեղծման ուղղությամբ:



Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Պարբերաբար թարմացվում է Ակադեմիայի պաշտոնական ինտերնետային կայքը՝ www.paara.am հասցեով, կայքում օպերատիվորեն կազմակերպվում է տեղեկատվության տեղադրումը, on-line հետադարձ կապի ապահովումը:

Ձեռք են բերվել համակարգիչներ, կոմպլեկտավորման համար համակարգչային պահեստամասեր, որակյալ տպիչ սարքեր, պատճենահանող սարքեր, պրոյեկտորներ, մոնիտորներ, համակարգչային ցանցի սարքավորումներ:

Աղյուսակ 11

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ (2010-2012 թթ.)

h/h	Գույքի անվանումը	2010թ. քանակը	2010թ.		2011թ. քանակը	2011թ.		2012թ. քանակը	2012թ.	
			մուտք	ելք		մուտք	ելք		մուտք	ելք
1.	Համակարգիչ	80			74	13	19	102	28	
2.	Դյուրակիր համակարգիչ	13			10		3	12	2	
3.	Պրոյեկտոր սարք	8			5		3	7	1	
4.	Տպիչ սարք	40			34		6	42	8	
5.	Պատճենահանող սարք	6			6			7	1	
6.	Ծրիչ (սկաներ)	2			2			4	2	

ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ակադեմիայի գրադարանի գրքային ֆոնդը կազմում է **11.494 միավոր**, այդ թվում՝

- ✓ հայերեն լեզվով գրականություն **7960 միավոր**
- ✓ ռուսերեն լեզվով գրականություն **2897 միավոր**
- ✓ օտար լեզվով գրականություն **638 միավոր:**

Իրականացվում է գրադարանային ֆոնդի նպատակային համալրում՝ ելնելով ուսումնական ծրագրերի և Ակադեմիայի գիտական գործընթացի պահանջներից:

Համալրումն ընթացել է հետևյալ փուլերով՝

- պլանավորում և աղբյուրների ընտրություն,
- գրականության ընդունում,
- հաշվառում-բաշխում:

Գրականության ընտրության հարցում հաշվի են առնվել ընթերցողի պահանջները (ըստ մերժումների քարտարանի) և մասնագետների կարծիքները:



Համալրման հիմնական աղբյուրներն են եղել դրամական փոխանցումները, միջազգային գրքափոխանակությունը և նվիրատվությունները:

Գրադարանում տեղադրվել են համակարգիչներ: **Գրադարանի ընթերցողներն անվճար օգտվում են ինտերնետային ծառայությունից՝ Wi-Fi կապի միջոցով:** Այդ ծառայության տրամադրումը ինքնուսուցման, հետևաբար, տեղեկատվական նոր որակի բարձրացման և՛ տեսական, և՛ գործնական երաշխիք է:

Գրադարանային փուլերի՝ գրականության համալրման, մշակման, պահեստավորման և սպասարկման ավանդական ձևերի կողքին սկսվել է **գրքերի թվայնացման գործընթացը: Թվայնացվել է 1270 միավոր** մասնագիտական գիրք (կազմ և համառոտագիր՝ անոտացիա): Թվայնացման գործընթացը շարունակվում է:

2012 թվականի նոյեմբերի 15-ի դրությամբ առկա է **39 միավոր գրքերի** ամբողջական էլեկտրոնային տարբերակ:

Էլեկտրոնային տեղեկատվության ապահովումը կատարվում է գրադարանում առկա և համացանցին միացված համակարգիչների միջոցով, գործում է էլեկտրոնային տվյալների բազա:

Մշակվել է **«Տեղեկատու-որոնողական» համակարգի** էլեկտրոնային տարբերակը, որը հնարավորություն է տալիս ստուգել գրքի առկայությունը և արագ գտնել պահանջվող գիրքը:

Ակադեմիայի գիտատեխնիկական գրադարանը **ELKA-ի (Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիում) անդամ է:**

Ակադեմիան կնքել է պայմանագիր **Ebsko** և **Springer** հրատարակությունների կայքերի հետ, որոնց միջոցով ուսանողները հնարավորություն ունեն որոնում կատարել բոլոր հասանելի գիտական ամսագրերում:

Համագործակցում ենք այլ գրադարանային ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ՝ գրականության հայտնաբերման, փոխանակման նպատակով:

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

«Հանրային կառավարում» գիտական հանդեսն ընդգրկված է ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ՀՀ ԲՈՀ) սահմանած դոկտորական և թեկնածուականատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում:

2012 թվականին հրատարակվել է «Հանրային կառավարում» գիտական հանդեսի 4 համար (2011թ.՝ 3 համար): 2012 թվականին «Հանրային կառավարում» գիտական հանդեսում տպագրվել է Ակադեմիայի աշխատողների **9** հոդված:



Ակադեմիայում իրականացված կառուցվածքային բարեփոխումներին և կադրային փոփոխություններին համապատասխան կատարվել են փոփոխություններ նաև **«Հանրային կառավարում» գիտական հանդեսի խմբագրական խորհրդի** կազմում:

«Քաղաքացիական ծառայություն» շաբաթաթերթն իր էջերում պարբերաբար անդրադառնում է Ակադեմիայի գործունեությանը, հրապարակում է քաղաքացիական ծառայության համակարգում ընդգրկված պետական մարմինների աշխատակազմերում առկա քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների մասին հայտարարություններ, հասարակությանը ներկայացնում է քաղաքացիական ծառայության համակարգի առջև դրված խնդիրները, իրականացվող գործընթացները, օրենսդրական դաշտում կատարվող փոփոխությունները:

2012 թվականին լույս է տեսել **«Քաղաքացիական ծառայություն» շաբաթաթերթի 42** համար:

2012 թվականի մարտից Հայաստանի լրատվական դաշտը հարստացավ ևս մեկ լրատվամիջոցով՝ **«Հանրային ծառայություն» շաբաթաթերթով** (լույս է տեսել 1 համար), որի հիմնադիրն է Ակադեմիան: Թերթի նպատակն է հանրությանն իրազեկել հանրային ծառայության գործունեության ոլորտներին, հանրային ծառայությունում ընդգրկված մարմիններում իրականացվող գործընթացներին, նրանց գործառույթներին, ինչպես նաև կենտրոնացված կարգով հրապարակել հանրային ծառայության համակարգում ընդգրկված մարմիններում առաջացող թափուր պաշտոնների մասին հայտարարություններ:

Համագործակցություն զանգվածային լրատվության միջոցների հետ

Քանակական և որակական վերլուծության են ենթարկվում Ակադեմիային վերաբերող բոլոր հրապարակումները, հեռուստատեսային և ռադիո նյութերը, լրատվական գործակալությունների և ինտերնետային պարբերականների անդրադարձները, տպագիր նյութերը:

Տեսանկարահանվում, լուսանկարահանվում են Ակադեմիայում անցկացված միջոցառումները, կազմակերպվում են Ակադեմիայի ռեկտորի մամուլի ասուլիսները:

Արմենիա, Հ1, ԱՐ հեռուստաընկերություններով և ՖՄ107,5 ռադիոկայանով կազմակերպվել են հեռուստատեսային և ռադիոհաղորդումներ, զրույցներ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գործունեության առանձնահատկությունների և ուսումնական ծրագրերի վերաբերյալ: Հաղորդումների ընթացքում ներկայացվել են կառավարման հոգեբանության ուղղությամբ կատարված գիտական հետազոտությունները, կառավարման հոգեբանության կարևորագույն խնդիրներն ու արդյունքները, որոնք նվիրված են ղեկավարների և տարբեր մասնագետների հոգեբանական դիմանկարը կազմելուն (պրոֆեսոգրամայի, պսիխոգրամայի հիման վրա):

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ակադեմիայի ամբիոնների դասախոսները և հայցորդները պարբերաբար հանդես են եկել գիտական հոդվածներով, որոնք տպագրվել են Ակադեմիայի «Հանրային կառավարում» գիտական հանդեսի 2012 թ. բոլոր համարներում, ինչպես նաև ՀՀ-ում և ՌԴ-ում հրատարակվող գիտական այլ հանդեսներում:

Գիտական և ուսումնամեթոդական հրատարակություններ (2012թթ.)³

✓ **Ռ.Վ.Աղուզումցյան, Ա.Բ.Լոքյան, Լ.Հ.Պետրոսյան** «Կոնֆլիկտի կառավարումը կազմակերպություններում» ուսումնական ձեռնարկ, 2012, Երևան «Պետական ծառայություն» 2012, 76 էջ

Այն «Կառավարում» և «Կառավարման հոգեբանություն» մասնագիտությամբ ուսանողներին, հոգեբանության հիմնահարցերով հետաքրքրվող հայցորդներին և ասպիրանտներին ծանոթացնում և ներկայացնում է կազմակերպություններում կոնֆլիկտային իրավիճակների պատճառները և դրանց կանխարգելման ուղիները:

✓ **Մ.Մ.Մարգարյան** «Պետություն» ուսումնական ձեռնարկ, 2012

Ձեռնարկի նպատակն է հանրային ծառայողներին և ուսանողներին ծանոթացնել պետության ինստիտուտի, բնույթի, էության, կառուցվածքի զարգացմանը պատմության հոլովույթում:

✓ **Գ.Հարությունյան** «Լիդերության հիմնական հոգեբանական դպրոցներն ու տիպոլոգիաները» ուսումնական ձեռնարկ, 2012

✓ **Գ.Դանիելյան** Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք: Ուսումնական ձեռնարկ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Դանիելյանի. - Երևանի պետ. համալս. - ԵՊՀ հրատ., 2012, համահեղինակությամբ՝ Ն.Այվազյանի, Ռ.Եղյանի, Ս.Մուրադյանի, Է.Շաթիրյանի և Վ.Ռաֆայելյանի:

✓ **Գ.Դանիելյան** Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք/ Վ.Այվազյան և ուրիշներ - Երևանի պետ. համալս. - Եր.: Երևանի պետական համալս. հրատ., 5-րդ հրատ. 2012, 4-րդ (էջ 104-119), 6-րդ (էջ 146-161) և 23-րդ (էջ 657-688) գլուխներ,

✓ **Ա.Մարկոսյան** «Բարձրագույն կրթական համակարգում հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետության բարձրացման մասին», Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի տեղեկագիր N 1, 2012թ. (27), էջ 99-106 (Համահեղինակներ՝ Ս.Ս.Թոքմաջյան, Գ.Ա.Իվանյան)

✓ **Ա.Մարկոսյան** «Կոռուպցիոն կորերի մաթեմատիկական մոդելավորումը», Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի տեղեկագիր N 2, 2012թ. (28), էջ 127-142 (Համահեղինակներ՝ Ս.Ս.Մխիթարյան, Ս.Հ.Թոքմաջյան, Մ.Ս.Մկրտչյան)

³ Ցանկն ամբողջական չէ:

- ✓ **Ա.Մարկոսյան** «Պետական գույքի օգտագործման արդյունավետության մակարդակի գնահատումը և առանձնահատկությունները», Համաշխարհային տնտեսության փոփոխման միտումները և Հայաստանի մարտահրավերները. հանրապետական գիտաժողով: ՀՊՏԻ ԳՄ, 13-15 դեկտեմբերի, 2011թ. Գյումրի, «Դպիր» հրատարակչություն, 2012թ., էջ 100-108 (համահեղինակ՝ Ա.Գ.Սահակյան)
- ✓ **Ա.Մարկոսյան** «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի ընդունման անհրաժեշտությունը և հայեցակարգային դրույթները», Համաշխարհային տնտեսության փոփոխման միտումները և Հայաստանի մարտահրավերները. հանրապետական գիտաժողով: ՀՊՏԻ ԳՄ, 13-15 դեկտեմբերի, 2011թ. Գյումրի, «Դպիր» հրատարակչություն, 2012թ., էջ 109-113 (համահեղինակ՝ Ա.Գ.Սահակյան)
- ✓ **Ա.Մարկոսյան** «Ազգային և օտարերկրյա կապիտալների հարաբերակցության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», 21-րդ դար. տեղեկատվական-վերլուծական հանդես. N3(43), 2012թ., էջ 28-49 (համահեղինակ՝ Բ.Ավագյան)
- ✓ **Ա.Մարկոսյան** «Հայր և Հայաստանը», Էկոնոմիկա, N 1 (20), 2012թ., էջ 19-20, էջ 24-25
- ✓ **Ա. Մարկոսյան** «Ջրային ռեսուրսների օգտագործման և կառավարման իրավական դաշտի բարելավման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի տեղեկագիր N 1, 2012թ. (27), էջ 34-41
- ✓ **Ա. Մարկոսյան** «Հանքագործական արդյունաբերության զարգացման արդի տնտեսա-էկոլոգիական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» Ստիպել քաղաքականությանը գործել. Բնապահպանական հիմնափորձերի և պաշարների կառավարման քաղաքականության ազատական մոտեցումներ, Երևան, Էդիթ Պրինտ, 2012թ, 80 էջ, էջ 49-67
- ✓ **Ա. Մարկոսյան** «Ու՛մ, թե ինչպե՛ս» Էկոնոմիկա, N1(20), 2012թ., էջ 10-18
- ✓ **Ա. Մարկոսյան** «Սակագների ձևավորման առանձնահատկությունները ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման ոլորտում. Ուսումնական ձեռնարկ» Եր., ԵրՃՇՊՀ, 2012թ., 48 էջ
- ✓ **Վ. Եղիզարյան** «Պետականությունը և պետական կառավարումը գլոբալացման և ինտեգրացման պայմաններում», Երևան 2012
- ✓ **В. Едигарян** «Интеллектуальная Магия - Магия третьего внимания», Ереван 2012
- ✓ **Ա. Ս. Ծպնեցյան** «Հողաշինարարության էկոնոմիկա»: Մեթոդական ցուցումներ առարկան ուսումնասիրելու և ստուգողական աշխատանք կատարելու համար, Երևան, ՀՊԱՀ 2012
- ✓ **Ա. Ս. Ծպնեցյան** «Ջրային տնտեսության էկոնոմիկա»: Մեթոդական ցուցումներ առարկան ուսումնասիրելու և ստուգողական աշխատանք կատարելու համար, Երևան, ՀՊԱՀ 2012
- ✓ **Ա. Ս. Ծպնեցյան** «Բնօգտագործման էկոնոմիկա»: Մեթոդական ցուցումներ առարկան ուսումնասիրելու և ստուգողական աշխատանք կատարելու համար, Երևան, ՀՊԱՀ 2012
- ✓ **Ա.Եզեկյան** «Հանրային ծառայությունը՝ որպես վարչաիրավական ինստիտուտ», Հանրային կառավարում, 2012թ. N 1-2, էջ 117-126



Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

- ✓ **Ա.Եզեկյան** «Հանրային ծառայության հիմնական համակարգերը ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում», Հանրային կառավարում, 2012թ. N3-4
- ✓ **Ռ.Վ.Աղուզումցյան** «Психологическое исследование руководителей управления проектами», Сборник научных статей, ЕГУ 2012, 8 ст.
- ✓ **Ռ.Վ.Աղուզումցյան** «Քաղաքական գործունեության հոգեբանական խնդիրները», Հայկական բանակ ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվ. ազգային ուսումնական կենտրոնությունների ինստիտուտի ուսումնական հանդես, 3-րդ համար, Երևան 2012, 5 էջ
- ✓ **Ռ.Վ.Աղուզումցյան** «Психологическая безопасность личности в современном обществе», Человек в информационном обществе, Сборник научных статей по материалам международной научно-практической конференции, Пенза-2012, 4 ст.
- ✓ **Հ.Մ.Ավանեսյան** Կազմակերպության աշխատակազմի ընտրության հոգեբանական չափորոշիչների մշակման ուսումնական ուղիները: «Փոփոխվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրներ» միջազգային գիտաժողովի ամփոփումներ, Երևան, ապրիլի 16-17, 2012թ., էջ 80
- ✓ **Հ.Մ.Ավանեսյան** Մասնագիտական պիտանելիության հոգեբանական չափանիշների համադրության վերլուծությունը : Հոգեբան առողջության հայկական հանդես 3 (1), 2012, էջ 13-17
- ✓ **Հ.Մ.Ավանեսյան** Դեռահասի ֆրոստրացիայի դրսևորման թեստավորման մեթոդների յուրահատկությունը: «Հասարակություն, ընտանիք, դեռահաս. արդիական խնդիրներ Հայաստանում և Սփյուռքում» միջազգային գիտագործնական համաժողովի հոդվածների ծողովածու, ՀՀ Սփյուռքի նախարարություն, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան, Հայկական հոգեվերլուծական ընկերություն, Երևան, 2012, էջ 60-65
- ✓ **Հ.Մ.Ավանեսյան** «Հոգեդիագնոստիկ չափորոշիչների կիրառումը մասնագիտական պիտանելիության գնահատման գործընթացում», Փորձարարական հետազոտությունները հոգեբանությունում: Գիտական հոդվածների ժողովածու / Ընդ. խմբ.՝ Հ. Մ. Ավանեսյան, Էդիթ Պրինտ, Երևան, 2012
- ✓ **Հ.Մ.Ավանեսյան** Αίτιας ἀεδοῦσιν ἰδίαιαι δακῶδες ἰνδῶιαι ἄνῆι ἰαῶε ἂ ἀνῆαι ῶεῖ. Ἄνῆαι ῶεῖ: ἰῆ, ἰδίαιαι, ἰῆῆἰῆῆ, ἰῆῆἰῆῆ V ἰῆῆἰῆῆἰῆῆ ἰῆῆ-ἰῆῆῆῆ-ἰῆῆῆῆ ἰῆῆῆῆ, ἰῆῆῆ, ΔΟΑΙ, 19-20 ἰῆῆῆ, 2012 ἂ., ἰ. 49-54.
- ✓ **Avanesyan H.M., Shirifard R. K., Honari H., Abadi S. E. G.** - Compression of the effect of individual and in group physical exercise on state anxiety in young people. Indian Journal of Science and Technology, v. 5, No. 4, April, 2012, p.p. 2627-2632
- ✓ **Գ.Ս.Հարությունյան** Փոխակերպվող հասարակության հոգեբանական առանձնահատկությունները և պաշտպանական մեխանիզմները, Միջազգային գիտաժողով «Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրներ» գրքում, Երևան, ԵՊՄՀ, 2012, էջ 98-99
- ✓ **Լ.Հ. Պետրոսյան** ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ ВПЕЧАТЛЕНИЯ ДЕТЕЙ О ДРУГИХ ЛЮДЯХ В УЧЕБНОЙ СРЕДЕ, Международная научно-практическая

конференция Психология в современном развивающемся мире: теория и практика: Материалы Международной научно-практической конференции/под научной редакцией Е.Ф. Яценко, В.Д. Иванова.-Челябинск:Издательский центр ЮУрГУ,2012-260с.

✓ **Լ.Հ. Պետրոսյան** Հուզական հատկանիշների ազդեցությունը ենթակաների կողմից ղեկավարի ընկալման վրա, Փորձարարական հետազոտությունները հոգեբանությունում գիտական հոդվածների ժողովածուում: Ընդ. խմբ.՝ Հ.Մ.Ավանեսյան-Եր.: Էդիթ Պրինտ, 2012-160էջ:

✓ **Լ.Հ. Պետրոսյան** ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՄ, ՀՀ ՊԿԱ Հանրային կառավարում «Պետական ծառայություն» հրատ., 2012:

✓ **Լ.Հ. Պետրոսյան** Влияние эмоциональных качеств на процесс восприятия руководителя подчиненными, Человек в информационном обществе: сборник научных статей по материалам Международной научно-практической конференции: 31 мая-1июня 2012-328с

✓ **Լ.Հ. Պետրոսյան** Влияние эффектов и механизмов социальной перцепции на внутреннюю среду организации, *European Applied Sciences: modern approaches in scientific research*

✓ **Ա.Ռ. Խաչատրյան** «Քաղաքային վախերի դրսևորման հոգեբանական առանձնահատկությունները», ԵՊՀ, Ընդհանուր հոգեբանության ամբիոն, «Փորձարարական հետազոտությունները հոգեբանությունում» գիտական հոդվածների ժողովածու:

✓ **T. Khechoyan** “Measuring Students’ Satisfaction in International Universities”, «Հանրային կառավարում» գիտական հանդես, # 3, 2012թ.

✓ **Թ. Խեչոյան** “Современное состояние малого и среднего бизнеса в Республике Армения”, III международная научно-практическая конференция “Проблемы и перспективы развития предпринимательства в России”, Российская академия народного хозяйства и государственной службы при Президенте Российской Федерации; Южно-Российский институт-филиал, Ростов-на-Дону, 2012 г.

✓ **Թ. Խեչոյան** Chapter 13: **SBA Country Profile Armenia. SME Policy Index: Eastern Partner Countries 2012. Progress in the Implementation of the Small Business Act.** OECD, European Commission DG ENTER, ETF, EBRD. 2012

✓ **Մարիամ Մարգարյան, Կարեն Գալոյան.** Ռացիոնալի և իռացիոնալի փոխհարաբերությունները հանրային քաղաքականության վերլուծության գործընթացում. ՀՀ պետական կառավարման ակադեմիա, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 1/2011, էջ 170-181:

✓ **Մարիամ Մարգարյան.** Համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման հիմնախնդիրները և «Հայկական աշխարհը», «Հայկական բանակ», 1-2 (67-68), 2011, 116-128

✓ **Մարիամ Մարգարյան, Մարի Զաքարյան.** Հավատը մարդասիրության ակունք՝ ըստ Գրիգոր Նարեկացու «Մատենի ողբերգութան», Պատմաբանասիրական հանդես, 1, 2011, 157-175



- ✓ **Կարեն Գալոյան.** Էլեկտրոնային բյուրոկրատիայի դերը ՀՀ հանրային անվտանգության քաղաքականության ապահովման գործընթացում. ՀՀ պետական կառավարման ակադեմիա, «Հանրային Կառավարում» գիտական հանդես, 2/3 2011, էջ 153-162
- ✓ **Մարիամ Մարգարյան.** Քաղաքական շուկայի արդիականացումը որպես Հայաստանի Հանրապետության հանրային անվտանգության բաղկացուցիչ. ՀՀ պետական կառավարման ակադեմիա, «Հանրային Կառավարում» գիտական հանդես, 1-2/2012, էջ 170-178:
- ✓ **Маргарян М., Меликян Р.** Политический GR в процессе модернизации информационной безопасности Республики Армения, 21-й ВЕК, журнал Научно-образовательного фонда «Нораванк», 5 (25). - Ер.: 2012. С. 13-145.
- ✓ **Маргарян М., Меликян Р.** Армянский мир в свете новых вызовов геокommunikационных контуров. «Հանրային կառավարում» գիտական հանդես. - Եր.: «Պետական ծառայություն», 3/2012թ. էջ 129-138:
- ✓ **Roman Melikyan.** A New Strategy of U.S. Foreign Policy in the South Caucasus: Priorities and Outlines. Գիտական հոդվածների ժողովածու/գլխ.՝ Լիլիթ Արզումանյան. – Եր.: Ասողիկ, 2012. P. 181- 196.
- ✓ **Մարիամ Մարգարյան, Հովսեփ Մովսիսյան.** Քաղաքական իշխանության լեգիտիմությունը՝ ՀՀ ժողովրդավարական համախմբման գործոն. ՀՀ Պետական Կառավարման Ակադեմիա, «Հանրային Կառավարում» գիտական հանդես, 4/2012, էջ 158-166:
- ✓ **Мариам Маргарян, Роман Меликян.** Политический GR в процессе модернизации информационной безопасности РА. НОРАВАНК 21-и ВЕК, 5, 2012:
- ✓ **Կարեն Գալոյան.** Հանրային անվտանգության ապահովումը՝ պետական բյուրոկրատիայի ինստիտուտի գործունեության արդիականացման պայմաններում. ՀՀ Պետական Կառավարման Ակադեմիա, «Հանրային Կառավարում» գիտական հանդես, 4/2012, էջ 167-177:
- ✓ **Mariam Margaryan, Karen Galoyan.** The vitality of new public management principles in the process of political transformation in the Republic of Armenia. Polish Sociological Review.
- ✓ **Մարիամ Մարգարյան.** «Good Governance»-ը՝ Անդրկովկասում խաղաղության մշակույթի հաստատման գործոն. «Հայկական բանակ» 2013.
- ✓ **Մարիամ Մարգարյան.** Ազգը՝ քաղաքականության սուբյեկտ. 21-րդ ԴԱԴ, 2013.
- ✓ **Մամիկոն Մարգարյան, Մերի Մարգարյան.** Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության արդիականացման արժեքային բազմաչափությունը ՀՀ Պետական Կառավարման Ակադեմիա, «Հանրային Կառավարում» գիտական հանդես, 4/2012, էջ 178-188
- ✓ **Ղևոնդյան Ռ.** Էթնիկ խմբերի դերը ոչ արևմտյան քաղաքակրթությունների արդիականացման մեջ.«Լրաբեր», հասարակական գիտությունների, 4 (632), 2011, էջ 94-100

- ✓ **Ռոբերտ Ղևոնդյան (հայցորդ)**. Բազմաէթնիկ տարածություններում անհատի անվտանգության ապահովման հնարավորությունները՝ «Արաբական հեղափոխությունների» լույսի ներքո. ՀՀ Պետական Կառավարման Ակադեմիա, «Հանրային Կառավարում» գիտական հանդես, 3/2012, էջ 139-149:
- ✓ **Գուրգեն Սիմոնյան (հայցորդ)**. Անկախությունն որպես հայկական քաղաքակրթության կենսական սկզբունք. ՀՀ Պետական Կառավարման Ակադեմիա, «Հանրային Կառավարում» գիտական հանդես, 3/2012, էջ 150-158:
- ✓ **Տիգրան Մեսրոպյան (հայցորդ)**. Քաղաքական մշակույթի արժեքային բազմաչափությունը ժողովրդավարական համախմբաման գործընթացում. ՀՀ Պետական Կառավարման Ակադեմիա, «Հանրային Կառավարում» գիտական հանդես, 1-2/2012, էջ 179-187:

«Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության» ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Մարիամ Մարգարյանը և «Քաղաքական հերմենևտիկայի» դասախոս Մարի Զաքարյանը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Պատմաբանասիրական հանդեսում» և «Շողակն» Արարատյան թեմի երկշաբաթաթերթի հանրային ընթերցանության համար նախատեսված համարներում համահեղինակել են հայ մշակույթի արդիականացմանը նվիրված հոդվածներ՝ նարեկացիագիտության տիրույթներում:

Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Մարիամ Մարգարյանի և ամբիոնի ասիստենտ Կարեն Գալոյանի կողմից կազմվել է «Քաղաքական գլոբալացում» առարկայի անգլալեզու ծրագիր՝ դիտարկելով Հայաստանի Հանրապետության մասնակցությունը գլոբալացման գործընթացներում, պատրաստվել է նաև անգլերեն լեզվով գիտական հոդված, որը տպագրման գործընթացում է Polish Sociological Review գիտական հանդեսում:

Ներկայացված են հրատարակման՝

- ✓ **Թ.Խեչոյան** “Public Policy of Small and Medium Sized Enterprises Training Support in Armenia”⁴.
- ✓ **Ա.Ռ.Խաչատրյան** «Ժամանակակից քաղաքաբնականներին բնորոշ վախերն ու դրանց առաջացման պատճառները», «Զանգակ-97» հրատարակչություն, «Հոգեբանություն և կյանք» գիտական հանդես:
- ✓ **Ա.Ռ.Խաչատրյան** Կառավարչի հոգեբանական դիմանկարը որպես գործունեության արդյունավետության հիմք: ԵՊՀ
- ✓ **Գ. Գսպոյան** «Ժամանակի կառավարում» ուսումնական ձեռնարկ – գտնվում է խմբագրման փուլում, կներկայացվի հրատարակման 2013թ. 1-ին եռամսյակի ընթացքում

⁴ Ներկայացված է հրատարակման Կիևում:



- ✓ Մ.Պետրոսյան, Ա.Զավադյան, Դ.Ամիրյան «Անձի ու պաշտոնի համապատասխանելիության հոգեբանական գնահատման առանձնահատկությունները» ձեռնարկ
- ✓ Մ.Մարգարյան «Քաղաքական լիդերության» դասագիրք

**ԿԱԶՄԱԿԵՐՊԱԻՐԱՎԱԿԱՆ, ՌԻՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ**

Ակադեմիայում մշակվել և հաստատվել են հետևյալ փաստաթղթերը՝

1. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ուսումնական տարվա առաջադիմության արդյունքներով ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների տրամադրման կարգ

Կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների հատկացման և պետական կրթաթոշակների տրամադրման կարգը և պայմանները:

2. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ներքին կարգապահական կանոններ

Կանոնները կանոնակարգում են աշխատողների՝ աշխատանքի ընդունման և ազատման կարգը, աշխատանքային պայմանագրի կողմերի հիմնական իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, աշխատանքի ռեժիմը, հանգստի ժամանակը, աշխատողների և սովորողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցները, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններին վերաբերող այլ հարցեր:

3. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի աշխատողների անձնական գործերը վարելու կարգ

4. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի մագիստրանտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ

Սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրանտների ավարտական ամփոփիչ ատեստավորման (քննության) և մագիստրոսական թեզի պաշտպանության կարգը և պայմանները:

5. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ամբիոնների վարիչների ընտրության կարգ:

Այն սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ամբիոնների վարիչների ընտրության, աշխատանքային պայմանագրի կնքման և պաշտոնում հրամանագրման կարգը:



6. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ամբիոնի կանոնադրություն

7. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ամբիոնի վարիչի պաշտոնի անձնագիր

8. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի «Հանրային ծառայություն» շաբաթաթերթի խմբագրության կանոնադրություն

9. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգ

Կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման, մագիստրանտների պայմանագրի կնքման, հրամանագրման և ուսուցման պայմանները:

10. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության քննության (թեստավորում և հարցազրույց) անցկացման կարգ

Կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության քննության (թեստավորում և հարցազրույց) անցկացման կանոնները:

11. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի գործավարության կարգ

ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կարիքների համար, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կազմակերպվել են գրասենյակային ապրանքների և գրենական պիտույքների, տնտեսական ապրանքների, համակարգիչների ձեռքբերման մրցույթների անցկացման գործընթացները:

Ակադեմիայի գնումների պատասխանատուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընդգրկվել է գնումների որակավորված մասնագետների ցուցակում:

Անցկացվել է 2012 թվականի տարեկան գույքագրում:

Ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման վարչությունը իրականացրել է նաև՝

✓ «Քաղաքացիական ծառայություն» շաբաթաթերթի ֆինանսատնտեսական գործունեության վարում,



- ✓ առկա և հեռակա ուսուցման, քաղաքացիական ծառայողների, համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների վերապատրաստում անցկացնող դասախոսների ժամավճարների հաշվարկում և վճարում,
- ✓ մագիստրանտների և ասպիրանտների կրթաթոշակների հաշվարկում,
- ✓ վճարովի ուսուցման համակարգում սովորող մագիստրանտների, ասպիրանտների և հայցորդների ուսման վարձի վճարումների և պարտքերի վերահսկողություն և այլն:

Հաշվետվությունների մշակում և ներկայացում

ՀՀ Նախագահի աշխատակազմ են ներկայացվել՝

- ✓ Ակադեմիայի «Բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի 2012 թվականի նախահաշիվ»
- ✓ Ակադեմիայի «Բյուջետային հիմնարկի արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման 2012 թվականի նախահաշիվ»
- ✓ Ակադեմիայի 2013-2015 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտ
- ✓ Ակադեմիայի 2013 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտ
- ✓ Ակադեմիայի ամփոփ հաշվապահական հաշվեկշիռ (ըստ եռամսյակների)
- ✓ Ակադեմիայի դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (ըստ եռամսյակների)
- ✓ Ակադեմիայի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվություն (ըստ եռամսյակների)
- ✓ Ակադեմիայի բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվություն (ըստ եռամսյակների)
- ✓ Ակադեմիայի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին հաշվետվություն (ըստ եռամսյակների)
- ✓ Ակադեմիայի արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման մասին հաշվետվություն:

Այլ հաշվետվություններ՝

- ✓ ԱԱՀ-ի հաշվարկի և «ԱԱՀ-ի տեղեկանքի» հաշվետվություններ (Արաբկիրի հարկային տեսչություն, ամսական կտրվածքով),
- ✓ Վիճակագրական հաշվետվություններ (Արաբկիրի վարչական շրջան, ամսական կտրվածքով),
- ✓ Ակադեմիայի աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին հաշվետվություն,
- ✓ Եկամտահարկի և սոցիալական ապահովագրության հիմնադրամի հաշվետվություններ (Արաբկիրի հարկային տեսչություն, եռամսյակային կտրվածքով),
- ✓ «Փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկի» հաշվետվություն (Արաբկիրի վարչական շրջան, կիսամյակային կտրվածքով) և այլն:



Ակադեմիայի բոլոր եկամուտներն ու ծախսերը նախատեսվել և օգտագործվել են տարեկան նախահաշվին համապատասխան:

Աղյուսակ 12

**ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ**

ՀՀ պետական բյուջե

ՄՈՒՏՔ	137609,4 հազ. դրամ	ԾԱԽՍ	137609.4 հազ. դրամ
այդ թվում՝		աշխատավարձ	75792,8
Այլ մուտքեր	99854,1	սոց.վճար	11461,3
Կրթաթոշակ	37755,3	մագիստ.կրթաթոշակ	37755,3
		Էլ.Էներգիա	7600,0
		այլ կոմունալ	3500,0
		նյութական ծախսեր /գրասեն., տրանսպորտ, տնտ./	1500,0

Արտաբյուջետային միջոցներ առ 26.12.2012թ. դրությամբ

ՄՈՒՏՔ	238516,1 հազ. դրամ	ԾԱԽՍ	230755,0 հազ. դրամ
Ուսման վարձավճար	178919,2	աշխատավարձ	143773,3
Ասպիրան, դոկտ. և հայցորդ	14402,3	սոց.վճար	16259,9
ՔԾ և համայնքա- յին վերա- պատրաստում	10478,3	ասպ.կրթաթոշակ	2373,9
ՔԾ շարաթաթերթ	15415,4	այլ կոմունալ	2640,8



Հայաստանի Հանրապետության պետական կառավարման սկադեմիա

Այլ մուտքեր/ ընդունել., վերաքն., արենդա/	19300,9	գործուղում	8273,1
		նյութական ծախսեր /գրասեն., տրանսպորտ, տնտեսական/	9413,8
		ներկայացուցչական ծախսեր	1168,8
		համակարգչ. սարքավորում- ների ձեռքբերում	14870,4
		տպագրական ծախսեր	14772,0
		շահութահարկ և ԱԱՀ	17209,0

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Մշակվել է **Ակադեմիայի ռազմավարական ծրագրի նախագիծը**: Նախագծում փորձ է արված բացահայտել այն հիմնական ներքին և արտաքին գործոններն ու միտումները, որոնք կարող են որոշիչ ներգործություն ունենալ Ակադեմիայի հետագա զարգացման վրա՝ կանխատեսելով նոր հնարավորություններ ու հեռանկարներ:

Բոլոր նպատակները սահմանվել են Ակադեմիայի ընդհանուր առաքելության և տեսլականի համատեքստում: Յուրաքանչյուր նպատակին հասնելու համար սահմանվել են մի շարք հիմնախնդիրներ և մշակվել այդ խնդիրներից յուրաքանչյուրի լուծմանը հասնելու համապատասխան միջոցառումներ և այլն:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է Ակադեմիայի կրթական մակարդակի բարձրացում, համապատասխանեցում միջազգային չափանիշներին և ՀՀ հանրային ծառայության համակարգի համար ժամանակակից հասարակության և տնտեսության պահանջներին համապատասխանող, մրցունակ և բարձրորակ մասնագետների պատրաստում, ինչպես նաև առաջիկայում Ակադեմիան՝ որպես ՀՀ հանրային ծառայության համակարգի հիմնական կադրային կենտրոնի վերակազմավորում:

Մշակման փուլում է նաև Ակադեմիայում որակի ապահովման հայեցակարգի նախագիծը:

Ակադեմիայի ներկա փուլի հիմնախնդիրներն են նաև՝

- ✓ վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների մոնիտորինգի և արդյունավետության գնահատման համակարգի կիրառման անհրաժեշտությունը,



Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

- ✓ կադրերի վերապատրաստման շարունակական համալիր բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը,
- ✓ Ակադեմիայի կրթական գործընթացի կայուն զարգացումը և արդիականացումն ապահովող համակարգի ձևավորումն ու այդ համակարգի գրավչության բարձրացումը,
- ✓ տեղեկատվական (ինֆորմացիոն) միջոցների համալիր ապահովվածությունն և մատչելիությունը,
- ✓ ուսումնական գործընթացն ապահովող լսարանային և գիտահետազոտական լաբորատորիաների բազաների վերազինումն ու արդիականացումը,
- ✓ լեզվի ուսուցման մասնագիտացված լսարանների ստեղծումը,
- ✓ լսարանների ապահովումը ժամանակակից տեխնիկայով (ինտերնետային կապ, համակարգիչներ, ցուցադրման թվային սարքեր, ինտերակտիվ գրատախտակ և այլն):

Ակադեմիայի ռազմավարական նպատակներ են՝

- 1) ստեղծել իրական նախադրյալներ Ակադեմիան հանրային ծառայության համակարգի կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման առաջատար կենտրոն վերածելու համար,
- 2) ստեղծել նախադրյալներ Ակադեմիան հանրային ծառայության բնագավառում տարածաշրջանային հզոր գիտահետազոտական կենտրոնի վերածելու համար,
- 3) ստեղծել վերլուծական կենտրոն, որը կուսումնասիրի և կներկայացնի առաջարկներ պետական կառավարման ոլորտի կադրային ռեզերվի և կադրային ընտրության վերաբերյալ, ինչպես նաև կտրամադրի քաղաքականության ոլորտում մասնագիտական տեղեկատվություն:

ԹԻՐԱՆՆԵՐ

1. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական բարձրորակ կրթություն: Ակադեմիայի կրթական գործընթացի կայուն զարգացումը և արդիականացումն ապահովող համակարգի ձևավորում և այդ համակարգի գրավչության բարձրացում:
2. Միջազգային գիտական և գիտահետազոտական համագործակցության զարգացում, համաշխարհային կրթական, գիտական տարածքում Ակադեմիայի վարկանիշի բարձրացում ու հաստատում:
3. Գիտության, կրթության բնագավառի որակյալ կադրային ներուժի և երիտասարդ կադրերի թվաքանակի կայուն աճի ապահովում:
4. Պետական կառավարման ոլորտում կադրերի մասնագիտական գիտելիքների խորացում, նրանց գործնական հմտությունների կատարելագործում՝ հաշվի առնելով



Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

համակարգի աշխատողներին ներկայացվող պաշտոնական պահանջները, ոլորտում ընթացող ռազմավարական բարեփոխումները:

5. Հասարակության հետ կապերի հետագա զարգացում և ներգրավում: Գիտահետազոտական կենտրոնների ստեղծում:

6. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում, համակարգչային ցանցի և էլեկտրոնային կայքի բարելավում:

7. Կառավարման արդյունավետության և վարչական ծառայությունների որակի բարձրացում:

Նախատեսվող ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումների արդյունքում Ակադեմիան պետք է դառնա հանրային կառավարման համակարգի գիտահետազոտական ինստիտուտ, որտեղ կստեղծվի ՀՀ կառավարման գիտական և տեսական հենքը, փորձագիտական արժևորման կենթարկվեն հանրային կառավարմանն առնչվող իրավական նախագծերը և նախաձեռնությունները, մեթոդական և կազմակերպչական օժանդակություն կցուցաբերվի հանրային ծառայության բոլոր տեսակներին՝ մարդկային ռեսուրսների կառավարման և զարգացման գործընթացներում:

Կառավարման համակարգում մարդկային ռեսուրսների զարգացման իրական կարիքների բացահայտման արդյունքում վերապատրաստում իրականացնող շարքային հաստատությունից Ակադեմիան պետք է դառնա հանրային ծառայողների վերապատրաստումների և որակավորման բարձրացման ծրագրերի մատակարար, էլեկտրոնային ուսուցման ծրագրերի մշակման և իրականացման կենտրոն, ՀՀ-ում «հանրային կառավարում» մասնագիտությամբ կադրերի պատրաստման չափորոշիչների և ծրագրերի մշակող և պատվիրատու:

Պետք է բարձրանա ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դերը քաղաքացիական ծառայողների ուսուցման ու վերապատրաստման գործում՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պետական ծառայողների, այդ թվում՝ քաղաքացիական ծառայողների բարձրագույն ու գլխավոր խմբի կառավարիչների ուսուցման, պատրաստման, որպես վերապատրաստման ու կատարելագործման կենտրոն կայացնելու, քաղաքացիական ծառայողների հմտությունների, կորպորատիվ կառավարման գործառույթներով կառավարիչների պատրաստման ու վերապատրաստման ծրագրերի մշակմամբ մասնագիտանալու, վերապատրաստման ծրագրերի մշակման միջազգային փորձի փոխանակման ու տարածման, վերապատրաստման ծրագրերի մշակման ու կարիքների բացահայտման մեթոդական ապահովման, վերապատրաստողների շտեմարանի ստեղծման ու վարման, վերապատրաստման ու հետբուհական մագիստրոսական ծրագրերը պետական կառավարման մարմինների աշխատակազմերի կարիքներին



Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

համապատասխանեցման, պետական բյուջեի և միջազգային վարկային ու դրամաշնորհների միջոցները Ակադեմիայի նյութատեխնիկական պայմանների արդիականացմանն ուղղելու, դրանք ԵՄ նոր անդամակցող երկրներին ներկայացվող չափորոշիչներին համապատասխանեցման, ակադեմիայի հիմնական անձնակազմի օպտիմալացման, հրավիրված պրոֆեսիոնալ մասնագետ դասախոսների ու վերապատրաստվողների թվաքանակի ընդլայնման միջոցով:

Պետք է հիմնվի ԵՄ չափանիշներին համապատասխան ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցած տեղեկատվական կենտրոն-գրադարան (թվայնացված), որտեղ կկազմակերպվեն տեսա-կոնֆերանսներ, հեռահար աշխատանքային քննարկումներ. գրադարանը կապահովի թե ինֆորմացիայի ստացման, համակարգման և վերլուծման և թե պետական կառավարման մարմիններին ու քաղաքացիներին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման ժամանակակից պահանջները: Ակադեմիայում պետք է ստեղծվի նաև Կառավարման ցուցասրահ-թանգարան, որտեղ կամբողջանա Հայաստանի երեք Հանրապետությունների կառավարման պատմությունը, որը հասանելի կլինի ինչպես ունկնդիրների, այցելուների, այնպես էլ հետազոտողների համար:

ՌԵԿՏՈՐ՝

Ա.ԼՈՔՅԱՆ

27.12.2012թ.